# Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԹՒԼՓ. ԻԷ. ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ԲՆՆԵՔԱՔԵՔ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 1894 Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.


| | | | |
|---|---|---|---|
| 1 | ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՒ Ս. ԿԱՐԳԸ . . . . . | 265 | Ա. Տէր-Մկրտչեան. |
| 2. | ՉՂՋԱՅՊՂ ԱՒԱՋԱԿԸ . . . | 270 | Բերսիէ |
| 3. | ԲԱՓԵՒԱՆՔ . . . . . | 278 | Ս. Հայկունի. |
| 4. | ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ . . . | 282 | Բժ. Լևոն Տիգրանեան. |
| 5. | ԿՈՆԴԱԿ ԱՌ ԱԶԳ. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ . . . . . | 288 | . . . . . |
| 6. | ՉԵՐՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ . . . | 289 | . . . . . |
| 7. | ՏԱՐԵԳԻՐՔ . . . . . | 292 | . . . . . |
| 10. | ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . | | . . . . . |


ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱՆՑՆԻ
ՌՅԽԴ—1894.

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄԲՐԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**




# Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

**ԱՄՍԱԳԻՐ**

ԹՒԼ. ԻԵ. ՏԱՐԻ. | ՀԱՄՔԱՔ ԲՆՆԵՔԱՔՔ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 1894 Թ.


## ԿՐՕՆԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

**ՍՈՒՐԲ ԿԱՐԳԸ.**

«Ամենայն ինչ՝ որ յԵկեղեցի, զերկնայինսդն բերէ ցոյց օրինակի»։ Յովհան Խմաստասէր։

«Եդ կենաբարն մեր աշտարակ զԵկեղեցի, որ հանէ զմեզ ի բարձունս երկնից»։ Ստեփ. Սիւնեցի։ [1]

Քրիստոս իւր արեամբ վըրկելով իւր հաւատացեալներին, հզօր ձեռքով հաստատեց իւր փրկարանն, որով նոքա կարող են անհատ յարաբերութեան մէջ մտնել Տիրոջ հետ և իւրանց սեռական կեանքն են-

1. Ցաղագս կարգաց Եկեղեցւոյ. Դրչագիր. համար 246։

թարկել նորա սրբարար ներգործութեան։ Աստուծոյ զթութեան շողերի տակ այս կեանքն է, որ բերաւ Քրիստոս մարդկութեան համար իբրև մի երկրային արքայութիւն Աստուծոյ, որ Քրիստոսի շաւղով տանում է դէպի անմահական արքայութիւնը։

Հայոց փրկարանն, որ մատակարարում է Աստուծոյ ողորմութեան շնորհները, Հայաստանեայց Եկեղեցին է, Քրիստոսի միասիրտ և միաբեղուս հաւատացողների ժողովն, Հայաստանեայց կաթողիկէն, «մայր հոգևոր երկնաւոր լուսաւոր, [1] քան թէ երկրաւոր շնչաւոր մարմնաւոր»», որ «ծնանի և աստուածա ումանս և զսկանս՝ պատկերս մաքուրս միոյն Աստուծոյ Քրիստոսի»։ [2] Այնտեղ մտնելիս վերածնեալ Հայը մուտանում է առ ժամանակ իւր առօրեայ հոգսերը, զգում է ինքեան հաւասար իւր շըր-

1. «Երկին եւ երկնից երկին զսա հիմնագործեալ պայծառացոյց՝ հանգիտահաւասար վերնայարկ կամաքին երրորդաթիւ թաղանթ խորանի, ուր մին եւ միայնակն բնակէ եւ շրջի յանծայրութիւն անբաւութեան Ս. Երրորդութեան»։ Անանեայ Նարեկացի. Ներբող ի սուրբ Կաթուղ. Եկեղեցի. ճոպաքաղ. 1859. էջ. 295։

2. Ս. Գրիգոր Նարեկացի. էջ. 14։

*Ջապատողների հետ Աստուծոյ առաջ, յիշում ե իւր մեղքերն և ներում իւր մօտ կանդնած ատելուն: Այս եկեղեցում ենք համոզուում որ մենք եսական անհատներ չենք, այլ Աստուծոյ համայնքին և սրբոց ժողովին պատկանող անդամներ,[1] որոնցից իւրաքանչիւրը պէտք է ըստ կարեաց աշխատի այդ համայնքի յառաջադիմութեան համար, սիրէ իւր ընկերին և սիրուն նորանից, Աստուծոյ արքայութիւնն յառաջ տանէ, Աստուծոյ երախտագէտ որդի լինի՝ նորա տուած շնորհները սրբութեամբ ընդհանրութեան օգտին գործածելով: Ճշմարիտ հաւատքը մեզ միացնողն է և ճշմարիտ հաւատքը մեր ղէնքն է՝ համարձակ գործելու և այդ փրկարանը մանելու:*

*Այդպիսով մենք միանում ենք թէ իրար և թէ մեր փառաւոր նախնեաց հետ, որոնք հոգեպէս մեզ աղօթակցում են, և մենք զօրացած նոցանով՝ շարունակում ենք մեր երկրային ճանապարհն: Նոքա, որոնց ոտի փոշին անգամ թօթափելու արժանի չենք, միանում են մեզ հետ հոգեպէս այս սուրբ վայրում: Հաւատն է, որ կազդուրելով մեր հոգու թուլութիւնք, միացնում է աւետիքիս, և թևաւորելով՝ տանում է դէպի «եկեղեցին անդրանկաց»:[2] Նոյն հաւատով ենք շնչում և ապրում ի Քրիստոս, և մեր անդամակից սուրբերին ապացոյց ճանաչելով մեր համայնական և ազգային հաւատքի ամրութեան, ընդունում և միանում ենք Քրիստոսի հետ, առանց որի չունինք ոչ մի փրկութիւն և ոչ մի երջանկութիւն: Ահա այդ սրբարանում աստուածութիւն և մարդկութիւն, հոգևոր և մարմնաւոր աշխարհ, ստանում են պատկառոր միութիւն և երջանկացնում երկրաբնակներիս: «Քանզի եկեղեցի ոչ ցուցանէ մեզ պատուիրան Աստուծոյ, որ ի քարանց և ի փայտէ իցէ շինեալ, այլ զհաւատոմն շինեալ զաղդ մարդկան ի վերայ վիմին հաստատութեան: Ապա ուրեմն ճշմարիտ հաւատն է եկեղեցի, որ գումարէ և շինէ զմեզ ի մի միաբանութիւն զիտութեան Որդւոյն Աստուծոյ»:[1]*

*Միայն հաւատքով կարողանում ենք մասնակից լինել Հայաստանեայց Ս. Եկեղեցու փրկագործութեան, սրբարար ներգործութեան և երջանկութեան: Նա իւր հաւատացողին վերածնում է, փրկում և դաստիարակում՝ Աստուծոյ որդեգիրը դարձնելու համար:[2]*

*Մինչդեռ «Անդրանկաց եկեղեցին», կամ Հայաստանեայց Ս. Եկեղեցու յաղթական անդամները յաղթել են աշխարհս և վայելում են հանդերձեալի անախեղծ բարիքները, փրկուող հաւատացեալները շարունակ կռուում են կեանքի խոչնդոտների և փորձանքների դէմ որոնք եղնում են մեր առաջ մեր անկատարելութեան և անհմտութեան պատճառով: Սոցա փրկագործող և դաստիարակող օգնողն է Հայաստանեայց Ս. Եկեղեցու շնորհագործող մարմինը:*

*Ահա այս շնորհագործող եկեղեցին է, որ պէտք է պահպանէ իւր աւանդական անարատութիւնն, որպէս զի զօրաւոր լինի և կարողանայ անշեղապէս կատարել իւր առաքելահաստատ գերը: Այս սկզբունքն էական հիմունքն է եկեղեցու, ուսոի և աղօթում է եկեղեցին շարունակ.*

*«Աղաչեսցուք զամենակալն Աստուած . . . և վասն միայնոյ, սուրբ, կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ»:*

*Ուրեմն Հայաստանեայց եկեղեցին, որպէս զի կարողանայ փրկել, սրբել և շնորհագործել, է և պէտք է լինի միշտ՝ մի, սուրբ, կաթուղիկէ և առաքելական:*

*Նա պէտք է լինի և է մի:*

*«Մի կոչէ եկեղեցի՝ ոչ տեղեաւ մի, այլ*

---

*1. «Միաբանութիւն հաւատոց յամենատուրք Երրորդութիւնն ի Ս. վարս՝ քաղաք ամուր է երկնային զօրութեամբն պարսպեալ, քանակութիւն է սիրոյն Աստուծոյ եւ վերին զօրացն, ժողովիլ ի նոսա ամենայն սրբովք յանմատոյց օրհնութիւնսն միաբանեալ . . . »: Յաճախ. 114:*

*2. Երր. ԺՒ, 23:*

*1. Ս. Սահակ:*

*2. «Զիմաթդ օտար եղելոց ի մօրէ՝ կարիցէ լինել ոք ծնող, կամ ղայեակ ըստ Պօղոսի . . . : Զի ծնեալքն քնութեամբ սիրեն զծնողսն. եւ մնեալքն զղայեակսն: Իսկ առ որս փոխանակ սիրոյ՝ ատելութիւն եւ օտարութիւն, զի՞նչ յոյս գոյ ծնանելոց զամենպիսին վերստին՝ աստուածեղէն քանիսն յաւազահարութիւն, կամ մնուցանելոց հայթօրէն ուսմամբ եւ երկիւղիւ Տեառն զնոսա : Ընդհանրական. էջ, 5:*

միով հաւատով և յուսով կոչմանն, և միոյ մկր և միոյ որովայնի Ծնունդ աւազանին, և մի կերակուր՝ որ է տեսութիւն աստուածայինն ղրոց, և մի մարմին և արիւն իրիկական, և մի պլուխ և պսակ և ղեկտա ունիմք զՔրիստոս»։ [1]

Այդ միութիւնը պահանջում է Քրիստոս, [2] ըստ որում և Հայաստանեայց Եկեղեցին ձըգտում է անխախտ պահել իւր միութիւնն ըստ ամենայն մասանց Քրիստոսի հետ, որ է Եկեղեցու դուռը, հիմն ու կատարը։

Միութիւնը պէտք է լինի թէ գաւանական և բարոյական, թէ պաշտամունքի և արարողութեանց էութեան, և թէ ընորհաբաշխութեան ու կանոնագրութեան սկզբունքների և թէ վարչական կարգաւորութեան մէջ։ Ըստ այմ այդ բոլորը պէտք է բնաւ չհակասեն Հայոց Եկեղեցու միաստուր վարդապետութեան, այլ և եկեղեցականք պէտք է ջանան Ս. Հոգու շնորհաց հետ համաձայն ընթանալ Հայրապետական շնորհաբեր իշխանութեան նեղքոյ։

Եկեղեցին իւր բոլոր մասերով Ս. Հոգու նեղործութեան տակ է, ուրեմն և եթէ միութիւնը չպահպանէ որ և իցէ կերպով, յանցանք սրած կլինի աստուածային ներգործութեան դէմ։ Նա իւր ամբողջ ընթացքում պէտք է պահպանէ իւր առաքելական—Հայրապետական աւանդականութիւնն, որպէս զի զրժած չլինի իւր էութեան։ Ուսոի և Պօղոս առաքեալը մինչև անգամ աղերսանքով է ասում։ «Աղաչեմ զձեզ եղբարք անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, և մի լիցին ի ձեզ հերձուածք»։ [3] Ուսոի և նզովքով արգելում է քարոզածից դուրս բան լսել։ «այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի ։ ։ ։ Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առիքն, նզովիալ լիցի»։ [4] Նա հրամայում է բացէ ի բաց մերժել հերձուածողներին և խորշել նոցանից, որովհետև նոքա դայթակղութիւն են և պատակաիչ են Քրիստոսի ճշմարիտ հօտին։ [1] Յովհաննէս առաքեալը մինչև անդամ հրամայում է չհիւրասիրել նոցա և ողջոյն չտալ նոցա, [2] որոնց նկատմամբ և վերջնական պատուիրանն է։ «Ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լսիցէ, եղիցի քեզ իբրև գհեթանոսն և զմաքսաւոր։ [3]

Աւետարանական այս պատուիրաններին հետևելով, աշխատում է Հայոց Եկեղեցին սերտ միութիւն պահել իւր ամենայն ամբողջութեամբ Քրիստոսի հետ, վասն զի միութիւնն է կատարելութեան նշան, [4] որով և խորշում է իւր միութեան դէմ գործողներից։ Որովհետև ճշմարտութեան երկրպագուն չի կարող համերաշտութեամբ չհետևանալ իւր հաւատոքըն ու սուրբ զղացմունքները վիրաւորողից և արհամարհողից։

Եւ ահա ինչպէս որ առաքելական գահակալն Ս. Գրիգոր Լուսաւորիչ բազմից հրամայում է իւր որդոց զղջալ լինել և չչեղուել իւր քարոզածից «ոչ յաջ և ոչ յահեակ», նոյնա արժանաւոր յաջորդներն էլ այդ կատարելով են պարծենում իւրեանց հաւատարիմ և հնազանդ հօտի հետ։ Այսպէս օրինակ, Կոմիտաս Կաթուղիկոսն գրում է [5] Պարսից գրան դէմ մարտաւաճ ժողովում «։ ։ ։ Շինեալ ես և հաստատեալ լինէ հօտս ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, և Ս. Գրիգորի կենդանի մարմրոսին Քրիստոսի, և որք ըստ նմանի Ս. Հարքն, որով և մեք ոչ խոտորեսցուք քան զստացեալ հաւատոս, զսուրբ և զաստուածաշունչ հարցն՝ ոչ յաջ և ոչ յահեակ ։ ։ ։»։

Ս. Գրիգոր Լուսաւորիչը միութիւն քարոզելով, մի և նոյն ժամանակ մատնացոյց է առնում և դրա օգտակարութեան. «Ամենայն

1. Ս. Գրիգոր Տաթևացի. գիրք հարցմանց. էջ. 533։
2. Յովհ. ժ, 16. ԺԷ, 11։
3. Ա. Կորնթ. Ա, 10։ Եփես. Դ, 4 — 6։
4. Գաղ. Ա, 8։

1. Տիտ. Գ, 10. Հռ. ԺԶ, 17։ Բ. Կորնթ. Զ, 14։
2. Բ. Յովհ. 10։
3. Մատթ. ԺԸ, 17։ Տիտ. Գ, 10։ Գիրք. հարցմանց. 540։
4. Յովհ. ԺԷ, 11։
5. Թուղթ ի Պարս. Դիշագիր. 58. 100։

որ քակի ի վաթանութենէ հաւատոյն և ս. վարուցն, ոչ միայն հրաժեշտ լինի յերանութենէ անտի, այլև ի պատիժ մատնի, որպէս անդամ ի մարմնոյ հատեալ անպիտան լինի, և կամ ոտ ի ծառոյ կտրեալ ի հուր »։ [1] Ուստի և հրամայուէր. «խզել զդժնդակացն վերամուտան, և վառել զհնս հակառակ չարին, և ի վայր կործանել զհակառակս արդարութեան »։ [2]

Հաւատքը շատ շեշտելինք, իսկ թէ ի՛նչ է հաւատքն, այդ ևս մեզ ուսուցանում է Ս. Ն. Շնորհալին,

«Հաւատոյն անուն մի է, բայց կրկին ունի զօրութիւն։ Առաջին՝ գաւանութեան հաւատն, որ է խոստովանութիւն ի Ս. Երրորդութիւնն՝ զոր ընկալաւ իւրաքանչիւր ոք յաւազանէն։ Երկրորդ՝ հաւատ այն է, որ զրանս զոր Հոգին Սուրբ խօսեցեալ է բերանով մարգարէիցն և առաքելոցն, և Եկեղեցւոյ վարդապետաց, զոյս ի դէպս սուրբս դրեցին՝ չհամարի առասպէլս և սուտս. այլ հաւատայ թէ ճշմարիտ են և ուղիղ այնպէս՝ որպէս թէ աչօք իւրովք տեսանէ զամենայն գեղեալն, և գլինելոցն, և զոր էնն։ . . . . . Արդ՝ որ այսոցիկ ի բոլոր սրտէ հաւատայ, նա է՝ որ ունի հաւատս կենդանի։ Որ և ոչ երբէք յանդգնի, կամ խորհել չարութիւն ի սրտի, կամ խօսել անիրաւութիւն բերանով, կամ գործել գեղս անձամբ իւրով։ . . . . Իսկ որ բանիւ միայն ունի զառ ի յԱստուածոյ խոստովանութիւնն, այլ ոչ գործով, այնպիսւոյն հաւատն ասի մեռեալ »։ [3]

Հայաստանեայց Եկեղեցու միութենից բըղխում է և նորա սրբութիւնը։ Այս սուրբ պակաք է լինի և է։

Սուրբ է կոչուում վասն զի նորա գլուխն և հիմքն Քրիստոս՝ սուրբ է. սուրբ հաւատով միանում ենք նորա հետ, Ս. միջոցներով և Ս. ճանապարհով դիմում ենք դէպի Ս. նպատակ։ Ուրեմն թէ սուրբ է և թէ սրբող, և այդպէս պէտք է լինէր, ապա թէ ոչ՝ կխախտուէր նորա միութիւնը, եթէ նորա վարդապետութեան մէջ լինի մինչև անգամ մի խոտոր տեսութիւն, այդով կխախտուի թէ միութիւնն և թէ սրբութիւնը։ Այսպիսով սուրբ է հիմքն ու գլուխը, սուրբ են և նորա վարդապետութիւնն ու խորհուրդները, սուրբ է և կոչումն, ուստի և նա ինքը սուրբ է կատարեալ։

Այս պարզ յայտնուած է Պօղոս առաքեալի խօսքերի մէջ. «Քրիստոս սիրեաց զեկեղեցի և զանձն իւր մատնեաց վասն նորա, զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ, զի կացուսցէ ինքն իւր յանպիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յայսպիսեացն, այլ զի իցէ սուրբ և անարատ »։ [1]

Վասնորոյ և Հայաստանեայց Ս. Եկեղեցին պահանջում է՝ սուրբ ղեկավարներով և երկիւղածութեամբ մօտենալ դէպի ինքն, որով հետև որտեղ չկայ հաւատ և սուրբ ղեկավարութիւն, այնտեղ ամենաարժէք սրբութիւնն անդամ խաղալիք կդառնայ։ Իսկ Քրիստոս սկզբում իւր աշակերտաց հրամայեց. «Մի՛ տայք զսրբութիւն շանց, և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզից, զի մի՛ առ ոտն կոխեսցեն զնոսա, և դարձեալ երդիծուցանիցեն զձեզ »։ [2] Սորանով արդէն միջոց տուաւ ապահովելու Եկեղեցու սրբութիւնն և հեռու պահելու հաւատացեալոց զանազան դայթակղութիւններից։

Հայաստանեայց Եկեղեցու հիմնադրութիւնն իսկ սրբութեամբ է դրուել, ըստ որում և աստուածային ձայնի յայտարարն այդ կր։

«Կաթուղիկէ Եկեղեցւոյն շնորհք Հոգւոյն ի մէջ վկայելոցն և ի մէջ Քահանայութեան

---

1. Ճառախ. էջ, 114։

2. Տես. եւ Անանիայ Նարեկացի, անդ. էջ, 407։ «Դու ով հերձուածողաց եւ խոտորելոց յուխտեն ճանապարհէն անընդհմտակաց նոցա զէն, եւ սխոյեան խորտակիչ, եւ հալածիչ յանդառնալի կորուստ իւրեանց չարութեանց եւ ամբարշտութեանց։ Դու ճնդելոցն օգնող եւ ի նենգապատիժ խարդախանացն ժողովարան »։

3. Հնդհ. էջ, 19։

---

1. Եփ. Ե, 25—27. Ա, 4։ Ա. Պետ. 15։

2. Մատթ. Է, 6։ Տես, եւ Յովհ. Ժ, 27։

բղխելոց է աղբիւր միւսոութեան, լուանալ զաղտ ոգւոցն մարմնովք հանդերձ»։ [1]

Այսպիսով «այս դշխոյ պաշտելի անշնջական Եկեղեցի տայ կեանս և մահու իշխէ ...»։ Նա «ոչ ինքնակիր մեղաց զաղրանայ, եթէ ոչ ի մարդոյ չարաց և կամ յանհաւատից կոխիցի»։ Եւ այդ պատճառով «ի մերոյ գործոյ խրթնանայ»։ ուստի և «զորս ըստ պատկերի Աստուծոյ եղեն, կանոնաւ խարէ»։ [2] որպէս զի օրըստօրէ նոցա ևս կրթէ և ընդունելով՝ սրբէ։

Հայաստանեայց Ս. Եկեղեցին կաթուղիկէ—ընդհանրական է։

Այդ ընդհանրականութիւնը ծագումն է նոցա միութենից և սրբութենից։ Քանի որ նա միացած է և սուրբ է Աստուծոյ հետ, և ամբողջ աշխարհը պէտք է անպատճառ առ նա ձգտի, պարզ է ուրեմն որ ձգտելու ճանապարհն ու սրբարանը նոյնպէս ընդհանրութեան համար է և ընդհանրութեան պէտք է վաղ թէ ուշ աւետարանէ և պարփակէ իւր մէջ։ Ըստ այսմ Քրիստոսի հրամանն է՝ քարոզել Աւետարանն ամենայն արարածոց, [3] և այդ կարող է անել Հայաստանեայց Եկեղեցին, քանի որ մի է և սուրբ։ Ուսուցանել, դասախարակել, փրկել մարդկութիւնը, իրագործել աստուածային Ս. կամքը մարդկանց մէջ—այս է Հայոց Եկեղեցու կոչումը։ Ուստի և նա իրաւամբ կրկնում է միշտ Քրիստոսի խօսքերն, «Ահն աւեմ ձեզ, մինչեւ անցցեն երկինք և երկիր, յոտա մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և ի մարգարէից, մինչեւ ամենայն եղիցի»։ [4]

Հայաստանեայց Եկեղեցու միութեան, սրբութեան, յաւիտենականութեան և ընդհանրականութեան երաշխաւորողը նորա առաքելականութիւնն է։

Հայաստանեայց Եկեղեցին առաքելական է։ Նա Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոսի աւանդական յաջորդութեամբ է հաստատուել և Ս. Գ. Լուսաւորչի Հայրապետութեամբ սատացել իւր հիմնական կազմակերպութիւնը։ Ս. Հոգու գործունէութիւնն և նորա շնորհաց պարգևատրութիւնն ապահովուած է նորա մէջ աւանդական առաքելական ձեռնադրութեամբ։ Նա հաստատուն է, վասն զի չինուած է «ի վերայ հիման առաքելոց և մարգարէից»։ [1] Նա գործունեայ է, կենդանի և կենդանարար, վասն զի անշարժելի է նորա առաքելական Հայրապետների աթոռն։

Ըստ որում և «Միածինն Աստուծոյ Հոգւովն Սրբով զսա հանդերձէ, ոչ յարաշարժ հանապազափոխ, այլ մշտակառոյց հիմամբ անսասանելիւս զսա հաստատէ»։ [2] Հետևաբար և «կարգք Եկեղեցւոյ հաստատուն և անշարժ եղիցին», ասում է Ս. Սահակ, ինչպէս որ Ս. Հոգին իւր յարաշարժ ներգործութեամբ զարդարում է։

«Կարգք որ ի սմա՝ ոչ առժամապիւսք են, այլ յաւիտենականք, և տեսանելիքս այս իմանալիք՝ ոչ մարդկային խմացուածք, այլ աստուածային Հոգւոյն յայտնութիւնք»։ շեշտում է և Յովհան Իմաստասէրը։ [3]

Ս. Հոգու յարակայ գործունէութիւնն և Եկեղեցու կարգ և օրէնքների և վարդապետութեան անփոփոխութիւնն առհաւատչեայ են, որ յաւիտենական ճշմարտութեամբ կառաջնորդէ մեզ Հայոց Եկեղեցին, կիրկագործէ և կասնէ զկոպի աստուածային ալքայութիւն, ամենևին չշեղուելով ուղիղ ճանապարհից, «իրրև տեղի և պատճառ փրկութեան, և ամենայն տէրունական ի մեզ ներգործութեան գործարան»։ [4]

«Իսկ եթէ ոք ձեռն չարութեան ի վերինն ալքայութիւն յանդգնաբար համբառնայցէ, և զիւա ինչ մարմնաւոր և կամ հնալք մարդկային, և կամ արուեստ երկրաւկնոյաղ զսահ-

---

1. Տեսիլ Ս. Լուսաւորչի. Ագաթ. էջ. 437. Ղազար Փարպեցին յիշումէ այդ. էջ. 78. 87։

2. Ս. Գ. Նարեկացի. Բան. 42։ Տես. եւ Ան. Նարեկ. անդ. էջ. 330 ... զառ ի ցրուեալսն ի սատանայական հրապուրմանէն առ ժամայն միահուռն յորդորմամբ ի քոյդ հաւաքելով գաւիթ՝ միաշօտ ընտրեալ եւ ազատեալ, միասիրտ եւ միաւորեալ եւ հաւատարիմ կացուցանես երկնաւոր հովուապետին եւ Քրիստոն տիեզերաց Յիսուսի ։

3. Մատթ. ԻԸ, 19։ Մարկ. Ժ.Զ, 15։ Յովհ. Ժ, 16։

4. Մատթ. Ե, 18։

1. Եփ. Բ. 20։ Ագաթ. 42։

2. Ս. Գ. Նարեկ. անդ։

3. Մատենագր. էջ, 137։

4. Դիդիմոս Մագիստրոս. Թուղթք։

մանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս ՆԿԵՂեցի վարկանիցի, և ոչ պարզև առաւել կենաց և ակնկալութիւն ապառնացն և Հոգւոյն Սրբոյ յայտնեալ լուսաւորոգ նախապրաստութիւն .... և կամաց Բարեղին ինկաւորեալ խորհրդարան, և առաքելոյ ձեռինն աջոյ բարեհանձար հիմնարկութիւն, միանդամայն ասել՝ գուռն երկնից և քաղաք Ապառնոյ կենդանւոյ, և մայր կենդանեաց ազատ ի պարտեաց, և ճշգրիտ անսակ կերպի երեւակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ Հոգւոյս, և շօշափելին պատկեր մարմնոյս ..... զայնպիսի ոչ խոստովանողն մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենակալ ի ձեռն բանին իւրոյ կախի, բարձեալ ի նմանէ և զաւանդ շնորհի Հոգւոյն փառակից, վակեաց զդուռն կենացս այս առաքսաւոր յանդիման նորին »։

(Շարունակելի)

Ա. ՏԵՐ. ՄԻՔԵԼԵԱՆ։

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ՁՂՋԱՅՈՂ ԱՒԱԶԱԿԸ։

*Մի ոմն ի կախելոց չարագործացն Հայհոյէր զնա եւ ասէր. ոչ դու ես Քրիստոս՝ փրկեա զանձն քո եւ զմեզ։ Պատասխանի եւս ընկերն սաստեալ նմա եւ ասէ. Երկնչեիս դու յԱստուծոյ՝ զի ի նմին պատժի կաս։ Եւ մեք յիրաւի. զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. եւ սա ապիրատ ինչ ոչ գործեաց։ Եւ ասէ ցՅիսուս, յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով։ Եւ ասէ ցնա Յիսուս, ամէն ամէն ասեմ քեզ, այսօր ընդիս իցես ի դրախտին ( Դո կ. թղ. 39—43 )։*

Դրաւք, կրկին հատաւ այն մեծ օրն, երբ ընդհանրական եկեղեցին ամբողջ աշխարհումն երկրպագումէ խաչեցեալ Որդւոյն Աստուծոյ։ Այս խաչն, որ պատք է Յիսուսի Քրիստոսի գործն ցնծացնէր, Նրան ամօթով ծածկելով. այս խաչն, որ այս օր էլ, ինչպես Պօղոս առաքելոյ օրերում, ոմանց համար գայթակղութիւն է և անմտութիւն. այս խաչն, որին աւելի ուժգին շարժումն քրիստոնէից յանցանքները, քան նոցա թշնամիների յարձակումները. այս խաչը գեռ կանգնած է, և ամեն օր բարձրանում է նոր անոր երկիրներում, որոնք ենթարկուում են Յիսուս Քրիստոսին։ Նա գեռ կանգնած է, որ աւետ աշխարհին սէր և Աստուծոյ սրբութիւնն և քարոզէ մեզաւորներին Թողութիւն և ողորմութիւն։ Նա գեռ կանգնած է և չը նայելով խաբուսիկ արտաքին երեւոյթին՝ երբէք զուտ չէր ենթարկած այնքան զղջացող սրտեր և այնպես խորը թափանցած էին քրիստոնէից հաւատան, ինչպես ներկայումս։

Եւ մենք, նրան շրջապատողներս, որպիսի՞ զգացմամբ նայում ենք նրան, յիշո՞ւմ ենք արդեօք, որ գոհը գոհ է պահանջում և որ մեր մեղաւոր բնութիւնը պէտք է խաչուի Քրիստոսի հետ։ Ո՜հ, քանի քանի քրիստոնեայքս այսօր որոնում ենք միայն մի տեսարան, որ ապշեցնէր նորա երեւակայութիւնն, առանց նորա սրտերը շարժելու։ Յիսուսի քրիստոսի չարչարանաց գործած տպաւորութեանց մէջ կայ, չգիտեմ որպիսի, մի գաղանիք քաղցրութեան, որ գրաւիչ է և մեղմիչ։ Մարդս վրդոված է, բայց այդ զգացմունքը զղջումն չէ. այդ արտասուքները հեւանք չեն խոնարհութեան։ Շատերը, որոնք աւելի աշխարհային են, շատ ընդունակ են հոգւոյ այդպիսի ալեկոծութեանց։ Այդ բոլոր արտասուքով լի աչքերը պատրաստ են վառուել և՛ այն ամենի համար, որ շոյում է նոցա յանցաւոր սովորութիւնները, այդ շրմունքների վերայ, որոնք յայտարարում են Փրկչի սէրը, տեղ կգտնէ և ամեն թեթեւամիտ խօսք, այդ սրտերը պատրաստ անձնատուր չեն և՛ ունայնութեան։ Եւ ո՞վ գիտէ, ո՜հ Աստուած, արդեօք հենց այստեղ, հենց այս ժամին, երբ մենք խորհրդածել ենք կամենում Քրիստոսի չարչարանաց վերայ, առաջին տեղն աշխարհիս ունայնութիւնը չ՞ բռնում։ Ո՞վ գիտէ, արդեօք այդ ունայնու-

1. Ս. Դ. Նարեկ. ընդդէմ Թոնդրակ։

թիւնը ցրուած մարերով չէ՛ եկած այստեղ Քո ձայնը լսելու։ Յիշեցրո՛ւ ուրեմն մեզ, որ կարելի է զուարճանալ ամենասուրբ զգացումներով և այդ զուարճութեան մէջ էլ կորցնել հոգին։ Յիշեցրո՛ւ մեզ, որ մեր մէջ այսօր ալեկոծուելու բանը մեր խիղճն է և որ մեր ամենալաւ պատասխանն այն սիրոյն, որ իրան զոհ բերեց, է—Քեզ նոյ իրե՛լը ընդ միշտ մեր սի՛րտն ու կեանքը։

Գողգոթայի վերայ երեք հոգիք էին խաչուած՝ մէկը նա՝ որ փրկութիւն է տալիս, միւսն՝ որ ստացաւ փրկութիւն, երրորդը նա՝ որ արհամարհեց այն։ Մէջ տեղում—չնորհաց բաշխողը, մի կողմում չնորհք ընդունող աւազակը, միւս կողմում նրան մերժողը։ Ես կամենում եմ այսօր խորհրդածել այդ մեծ տեսարանի վերայ և ուսումնասիրել յանցաւորներից առաջին օրինակն, որին դարձի բերեց Քրիստոսի խաչը։

Երկու աւազակներ չարչարուում էին Քրիստոսի հետ՝ Ս. Մարկոսն և Ս. Մաթէոսն ասում են, որ սկզբում նոքա երկուսն էլ միացան անբոհի հետ Նրան նախատելու համար։ Այո՛, ամեն կողմից նախատինք է թափուում Քրիստոսին տանջու մէջ միացան ամենամեծ թշնամի՝ Հերովդէս և Պիղատոս, Սադուկեցիք ու Փարիսեցիք, ծերք և ժողովուրդ, Հռովմայեցիք ու Հրեայք և կարծես այս էլ բաւական չէր, զոհերը միացան իրանց դահիճների հետ։ Արդեօք դուք ձեզ հարց տուե՛լ էք, ուսա՛ի է այդ ընդհանուր զրպիսը և որպիսի՛ զարհուրելի բնազդում միացրեց նրանց Քրիստոսին նախատելու համար։ Այս ամենն այն պատճառով է, որ Քրիստոսի մէջ մեր առաջը կանգնեց սրբութիւնն, որ մեր բնութիւնը մերկանդամ արեց և յայտնագործեց անարդարութեան այն զօրութիւնքն, որոնք նիրհում են մարդկային հոգւոյ խորքում։ Ես ասում եմ՝ մարդկային հոգւոյ խորքում և ոչ մարդոց այս կամ այն դասակարգի մէջ, որովհետև նոքա ամենքն էլ մի են։ Պօաերում մի ճարտասան Նորայէլացի դժգոհութիւն յայտնեց, որ Քրիստոսի խաչելութեան յանցանքը միայն մի ցեղի (ազգի) վերայ են դնում։ Եղբա՛յք, նա արդար է. այստեղ մենք ամենքս էլ համաձայն ենք. կրքերն, որոնք կանդնեցին խաչը, յատուկ են ամեն ժամանակներին ու երկիրներին։ Ամեն անգամ երբ սրբութիւնը յայտնուում է աշխարհում, նա շարժում է իւր դէմ անդիմադրելի բարկութիւն։ Որքան էլ նրան ձեզ քաղցր և գրաւիչ ներկայացնէք, էլի նա ազատ չի մնալ ատելութիւնից։ Այս հասկանալը դժուար չէ։ Նոյնից աւելի մաքուր ու բարերար բան չկայ. որպիսի՛ ուրախութիւն է նա պատճառում նրան, ով տեսնում է նորա ծագումն խաւարից յետո, որ սարսափով պատում է բանտարկեալին երկարատև դիշերուան մէջ բանտում։ Ինչպէ՛ս զուարճացնում է նա բանտարկեալին, որ զրկուած է երկար ժամանակ նորա ճառագայթներից։ Բայց երբ այդ լուսոյ ճառագայթներն ընկնում են յաւազար աչքի վերայ, շլացնում են նրան, նրան զրգռում և անտանելի տանջանք պատճառում։ Եւ նա կը փախչի լոյսից և դէպի խաւարը կգառնայ։ Նոյնը պատահում է և բարոյական աշխարհում։ Մեր հոգւոյ աչքը յաւազար է. սրբութեան պատկերը կուրացնում է նրան։ Որքան նա աւելի լուսաւոր է, այնքան աւելի է նորա արած զրկիսը։ Ենթադրեցի՛ք այժմ որ սրբութեան այդ պատկերն, որ յայժմ յայտնուում էր իրրև թռուցիկ արշալոյս, յանկարծ մարմնանում է մի էակի մէջ, որ նրան ցոյց է տալիս իւր բոլոր քայլով. ենթադրեցի՛ք, որ այդպիսի էակը յայտնուում է այնպիսի աշխարհում, որպիսին մերն է՝ ի՛նչ էք կարծում, նա ընդունելութիւն կգտնի՛։ Ես չեմ տատանուիլ ասելու, որ դաղտնի, բայց եռանդուն և միշտ աճող ատելութիւնը շուտով կշարժի ամեն հոգւոյ մէջ, որին շլացրել է նորա լոյսը և որ այժմ էլ ինչպէս տատն և ուխտը դարառաջ կամաւոր կոյրերը Հրէանների պէս կադաղակեն դատաւորի առաջ. «բարձ՛ դղա՛, բարձ՛ ի մէնջ»։

Մենք միշտ համարձակ եղել ենք քարոզել Հրէանների վերայ և Գողգոթայի ամբողջ տեսարանի համար պատասխանատուութիւ-

նը նոցա մոռեռանդութեան վերադրելու, բայց անձնախաբ չլինինք. կրքերն, որոնք խռովում էին Հրէից ազգին, իսկապէս յատուկ են ամեն մարդկային սրտի: Դուք, հեռուում զարմանալով կանգնած էք Քրիստոսի առաջ և հարցնում էք, թէ ինչպէս կարող էին Նրան սատել: Բայց ի՞նչ կլինէր, եթէ Քրիստոս յայտնուէր ձեր առաջ և Նորա մաքուր լոյսը լուսաւորէր ձեր հոգւոյ ամենածածուկ շարժուածքները: Դուք, դժուած մարդկային փառքից, կարծո՞ւմ էք թէ առանց դժդոհութեան կլսէիք, եթէ ձեզ յայտնէին, որ ձեր կիրքը ձեզ անարժան է անում Աստուածմէ բղխող փառայ: Դուք, որոնք բոլոր հաւատը արտաքին բարեպաշտութեան էք վերածել ու թեթեւամիտ և յանցաւոր կեանք էք վարում ի՞նչ կանէիք, եթէ ձեզ բռնել դերեզման անուանէին: Դուք, պատուաւորութեանց մարդիկդ, որոնք միայն ձեր վիճակը բարձրացնելու վերայ էք հոգում կարող կլինէիք արդեօք անտարբերութեամբ լսել, եթէ ձեզ յանդիմանէին ձեր կռապաշտութեան համար: Դուք, որ ձեր մաքում զուարճանում էք ձեր բնաւոր աղնուութեամբ, կարող կլինէիք արդեօք տանել, եթէ Աստուածային աչքը, բարձրացնելով վարագոյրը, բանար ձեր առաջ բոլոր ձեր գաղտնի թուլութիւնքը, բոլոր ձեր ծածուկ յանցաւոր սովորութիւնքն, առ հասարակ բոլոր ստորութիւնն, որ ծածկուում է մարդուս հոգւոյ մէջ: Եւ եթէ Նա հրաւիրէր ձեզ Նրան հետևելու, հրաժարուելով ամեն բանից և կրելու ձեզ վերայ խաչի ծանրութիւնը Նորա առաջ, կարծո՞ւմ էք արդեօք, որ այդպիսի հրամանից չէ՞ն ալեկոծուիլ ձեր բնական յանցաւորութիւնն ու բարկութիւնը: Այո՛. ինձ թուում է, թէ արդէն լսում եմ մեր մարմնեղէն սրտերի բողոքը այդ խիստ խօսքի դէմ: Ինձ թուում է, թէ ես տեսնում եմ ինչպէս բոլոր կրքերն, որոնք պատապարտեցին Քրիստոսին, միացան և աղաղակ բարձրացրին, որ խլացնեն ու լռեցնեն Նորա ձայնը: Մեր հասարակութեան թէ բարձր շրջանում և թէ նորա ամենատարր շերտերումն էլ դուրս կը բարձրացնէին ամեն վատ բնազդումներն, որպէս պի այդ մերկացուցչին ու յանդիմանողին հալածեն: Ներկայիս փարիսեցիութիւնն իւր ձևական հաւատով և ինքնագոհ սրբութեամբ իւր ձեռքը կմեկնէր սպանութեան, այսինքն թեթևամիտ սկեպտականութեան (երկբայութեան) և ծաղրող նիւթապաշտութեան, եսասէր հարստութիւնն և ձնշեալ ու վրդովուած աղքատութիւնը, գիտութիւնն իւր արհամարհանքով և տգիտութիւնն իւր մոռեռանդութեամբ, անյագ ագահութիւնն, ամբռխալի շռայլութիւնը, ստոր կրքերը, մի խօսքով խաւարի բոլոր իշխանութիւնք կմիանային և մի աղաղակ կբարձրացնէին՝ «ի խաչ հան» և ձշմարտութիւնն, որին ամենք սատումեն, այլք թեթևամտութեամբ չեն ճանաչում կունենար ինչպէս նրուսաղէմում իւր անմիտ դատապարտողներն ու դահիճները: Նա կդանէր և իւր անարդար դատաւորներին, որ կլսեանային իրանց ձեռքը Նրան դատապարտելով: Այդ խաւար ամբոխի մէջ ամեն ինչ բաւական կդտնուէր, Հերովդէս և Պիղատոս կմիանային Նրան ջնջելու համար, մինչև անգամ յուդաներ կգտնուէին Նրան մատնելու համար:

Յայտնի բան է, եղբայր, սրանցից ոչ մէկը չի պատահիլ: Յիսուս Քրիստոս այլ ևս մեռնելու չէ, բայց բաւական չէ՞ արդեօք մեզ համար իմանալն էլ, որ Նա կարող էր մեռնիլ: Ո՛չ, Քրիստոսի թշնամիք միայն գողգոթայի վերայ չեն: Նորա ամենօրեայք են, ուր միայն կան սրտեր, որոնց կուրացնում է աշմարտութիւնն և զրդռում սրբութիւնն, սրտեր, որոնք սիրով անձնատուր են լինում մեղքին, որովհետև այդ սրտերն, եթէ նորա դրուէին Քրիստոսի առաջ և Նրանից դատապարտուէին, Նրան կատէին, ինչպէս հրէաները:

Եթէ այս ժողովի մէջ կայ մի մարդ, որ Աւետարանի առաջ ապրում է մեղքի մէջ խոթասուզուած և խաւարը լոյսից գերադասում է. թո՛ղ այդպիսին իմանայ, որ նա մեղսակից է Քրիստոսի խաչողներին, որովհետև նա, ինչպէս ասում է առաքեալը, կրկին Քրիստոսին

ի խաչ է հանում և Նրան անարգանաց մատնում։ «Երբ ինձ կարգացրին Յիսուսի Քրիստոսի մահուան պատմութիւնը—ասաց մի ափրիկեցի նորադարձ հաւատացեալ—ես պախարակումէի Հրէաներին և Պիղատոսին, բայց երբ ես նրանց հասկացայ, ես ինքս ինձ սկսայ պախարակել, որովհետև ես էլ Յիսուս Քրիստոսին ի խաչ էի հանում»։

Այսպէս ամենքը նախատում էին Նրան։ Բայց այս անմիտների ներդաշնակութեան մէջ ամենից քիչ կարելի էր ապաւել խաչեալ աւազակների ձայների մասնակցութեան։ Նոքա և՛ս միացան անբոխի հետ։ Սրանից նոքա ինչ կարող են ակնկալել։ Ամբոխի համար նոքա էլ արհամարհանաց առարկայ են։ Նոքա միացան նորա հետ Յիսուսի Քրիստոսի դէմ։ Նա ինչ չարիք էր հասցրել նրանց։ Ի՞նչ է նշանակում այս խստասիրտ և ամօթալի անձնագովութիւնը ինչով բացատրելու է սա։

Այս բացատրութիւնը շատ էլ դժուար չէ. չարչարանքն էլ իւր փորձութիւնն ունի։ Որքան չարչարանքներն արժանապէս են տառացած, այնքան աւելի շուտ առաջ են բերում արտունջ, իսկ սրանից մինչև չարաբանութիւնն մի քայլ է։ Այդ մարդիկ գիտեն, որ իրանց վերջը մօտիկ է... երկիւղ նրանց այլևս ոչինչ չէ կարող տալ։ Նոցա առաջ մահուան տապանակի չարչարանքից աւել բան չկայ. և նոցա յուսահատութիւնը արտայայտում է նոցա անմիտ բարկութեան մէջ։ Նոքա չարաբանում են Յիսուս Քրիստոսին հէնց այն պատճառով, որ Նա իրան Փրկիչ էր անուանում և այժմ չէ կարողանում ինքն իրան փրկել, խաչից իջնելով։ Անմիտները չգիտեն, որ եթէ Նա մնում է խաչի վերայ, դա նոցա հոգիքը փրկելու համար է։

Ի՞նչպէս այստեղ յաւօք սրտի չհիշենք նրանց, որոնց վիշտը զբաղեցնում է։ Վիշտը պէտք է առաջնորդէր առ Աստուած, վշտի մէջ մենք սովորում ենք դնահատել խաղաղութիւնն և մեզ իրանցս։ Նա թուլացնելով մեր այժերը՝ զգալ է տալիս մեզ մեր կատարեալ կախումն, խոնարհելով մեր կեղծ զուարճութիւնքը, վիշտը տանում է մեզ ճանաչել մեղքի բոլոր դառնութիւնը։ Չհնոյ վշտով ծանրաբեռնեալներին է տանում Աստուածն իւր խոստումները։ Նրի շատերը նրանցից չեն հասկանում Նրան, ընդհակառակն ոյգան անդամ վիշտը վրդովել է մարդոց։

Դուք կարծում էիք, թէ բնականաբար Քրիստոսին պէտք է սիրեն աւելի նոքա, որոնք աւելի կարօտ են միխիթարութեան. դուք կարծում էիք, թէ աւելի շուտ Քրիստոսին Փրկիչ կճանաչեն նոքա, որոնք աւելի հեծում են թշուառութեանց լծի ներքոյ—թէ աւելի եռանդով կը դիմեն դէպի իսկական հայրենիքը նոքա, որոնք չկարողացան գտնել իրանց համար աեղ այստեղ արեգակի ներքոյ, թէ նոքա աւելի կարօտում են յաւիտենական խոստմանց, որոնց սրտերն այստեղ երկրից վերայ աւելի խոցոտուած են։ Քրիստոսի դէմ ապստամբող հողինների դատապարտութեան ժամանակ մեզ թուում էր, թէ գոնէ վշտացեալները Նրան հաւատարիմ կմնան, որովհետև ոչ Նրանից աւելի համակրութեան գանձ ունէր դէպի նոքա, ոչ բացի Նրանից ուղղած էր յաւիտենական կեանքի խօսքեր դէպի նոքա, բայի Նրանից ոչ իւր վերայ կրեց նոցա ծանրութիւնը։ Բայց և այնպէս դուք յանձակ կը տեսնէք, որ վիշտը վրդովում է և չարաբանում դուք կտեսնէք տանջուած սրտեր, որոնք ծաղրում են Աստուածն և Նրա խոստումները և որոնք բոլոր մեր հրապէրներին պատասխանում են կծու երգիծաբանութեամբ և ծաղրում են Աստուածային սիրոյ ամենաքնքոյշ խօսքերը։ Թշուառները, մերժելով Յիսուս Քրիստոսին, նոքա ոչ կերթան և ոչ նրանց կվխիթարէ, եթէ նոքա արհամարհում են Աստուածային Մխիթարչի խօսքերը։ Այո՛, թշուառ են և անմիտ, վասն զի եթէ կյայտնում մի որ և է մարդարէ բացատրութեան և կասէ նրանց թէ երկինքը—դա դատարկ ձայն է, թէ աղօթքը—զուր աղաղակ, որին ոչ ոք պատասխան չի տալ, թէ ամեն ինչ դէպի ոչնչանալն է գնում թէ մարդուս համար ամեն ինչ գերեզմանով վերջանում է,—

ո՛չ, դուք կասեմ՛ք, թէ ինչպէս նոքա կվա-
ղեն պէսպէս նա, ինչպէս նրան իրանց բարեկամ
և փրկիչ կկոչեն, և զարհուրելի զուարճու-
թիւն կդնեն մեայլ դիշերուան մէջ, առանց
սթափման, սա իսկական մեկնութիւն է մեր
բնարանի խօսքերին, թէ երկու խաչուածներն
էլ նախատում էին Պրան:

Բայց ո՞վ կարող է չափել հնարհաց գործո-
ղութիւնը, ով կհամարձակի յուսահատուիլ
մարդուս հոգի մասին: Երբ գողգոթայի վերայ
լսում էր ծաղրի ազաղակը, աւազակներից
մէկը յանկարծ լռեց և նորա հայեացքն ըն-
կաւ Յիսուսի Քրիստոսի վերայ:

Նա տեսաւ Նորա երեսն, որոյ վերայ հո-
սում էր արիւն և նրան տեսանելի եղաւ Նո-
րա բոլոր մեծութիւնը. Քրիստոսի հայեացքի
մէջ նա տեսաւ անսահման սէր և ամբոխի ա-
զաղակի միջով նա լսեց. «Հայր, թո՛ղ դոցա,
զի ոչ գիտեն, զինչ գործեն», խօսքերը: Ա՛յն
ժամանակ այդ մարդու հոգւոյ խաւար խոր-
քում սկսաւ գարմանալի յեղափոխութիւն
կատարուիլ: Յանկարծ կարծես աստուածային
լոյս լուսաւորեց նրան: Առաջին անգամ նա
տեսաւ սրբութիւն, տեսաւ սէր: Անտեսանե-
լի զգայմունքից շարժած, նա աւելի և աւե-
լի խորը նայում է և նորա հոգւոյ աչքերին
առաւել և առաւել յայտնուում է Յսաչեալի
աստուածային մեծութիւնը:

Բայց այս պարզուած ճշմարտութիւնը նա
իւր մէջ ծածկուած պահել չէ կարող: Քրիս-
տոս ոչ մի չարիք չէ գործել, այս սկսաք է
ասել յայտնապէս. ինչ միտս որ ինքը խաչ-
ուած է—նա ուզում է խօսել: Եւ նա խօ-
սում է: Պատճէ՛ք արդեօք այս մասին:
Քրիստոս երեք տարի ուսուցանում էր և այն
ժամանակ նորա մասին խօսում էր ամբոխն
ու ողջունում նրան, իսկ Գողգոթայի վերայ
միայն մի աւազակ դանուեցաւ, որ խոստովա-
նեց Նորա հնարհքն ու ողորմածութիւնը:
Նորա վերայ ուշադրութիւն դարձրեցի՛ք, ո՛վ
երկչոտ քրիստոնեայք, որոյ հաւատը տատան-
ուում է Քրիստոսին ուրացող և անարգող ամ-
բոխը տեսնելիս: Ձեր հաւատի համար հար-
կաւոր է բազմութեան համակրութիւնը: Բայց
յիշեցէ՛ք, որ այն րոպէին, երբ խաչեալ Աշմար-
տութիւնը աշխարհիս անարգանաց ենթարկ-
ուեցաւ, նորա համար միայն մի վկայ դանուե-
ցաւ և այդ վկայն աւազակ էր:

Երբ նա՝ աւազակը դիմում էր Քրիստոսին,
նորա առաջ յայտնուեցաւ իւր բոլոր յան-
ցաւորութիւնն: Մինչև յայժմ նա խեղդում
էր իւր խղճի յանդիմանութիւնն իւր մէջ. նա
կամայ խստանում էր և անզգայանում իսկ
այժմ նորա առաջ յայտնուեցան իւր խըղ-
ճալի դոյութեան յանցանքներն և լոյն ի վե-
րուստ ցոյց տուեց նրան այն խաւարն, ուր
խորասուզուել էր:

Ամեն ինչ ներող այս սիրոյ առաջ նորա
եսասիրութիւնը, նորա անարդարութիւնը ի-
րանց բոլոր սևութեամբ յայտնադործուեցան:
Եւ ահա նա ասում է. «Եւ մեք յիրաւի, զի
արժանի, որոց գործեցաքն՝ առնումք զհա-
տուցումն»: Ահա, եղբա՛յք, շարժուած սրտի
խօսքեր, ոչ մի արդարանալու պատճառաբա-
նութիւն, ոչ մի դատարկաբան խնդիր ներո-
ղութեան: Նա ինքն իրան տեսաւ և ճանա-
չեց իւր անձը: Այս բաւական էր, որ նորա
մի րոպէ առաջ Քրիստոսին չարաբանող շըր-
թունքներից լսուէին պղծման խօսք և կոծ:
Այս բաւական է, որ նա մեզ միշտական օրի-
նակ դառնայ, որ ուսուցանում է մեզ անպայ-
ման խոստովանելու մեր յանցաւորութիւնն և
նորա նման Փրկչի ողորմութեան միայն ապա-
ւինելու:

Ի՞նչպէս, միթէ այսպէս փութով կասկ
սկեպտիկեանն և անհաւատութեան ծաղրով
կհանդիպի այս պատմութեան: Այո՛, աշխար-
հը չէ հաւատում այսպիսի յանկարծական
վոխոխութեանց և ի՞նչպէս կարող է նա հա-
ւատալ, երբ ներկայումս ամեն ինչ բացատ-
րումն բնութեան ներգործութեամբ, աւելի
ճիշտն ասեմ—բնութեան ճակատագրով: Մեզ
կզիջանեն աւելի շուտով երթ խոստովանենք,
թէ յեղափոխութիւնք և վերածնութիւնք լի-
նում են տակաւ առ տակաւ և աստիճանա-
բար և դոցա պաղմը, ինչպէս ասում են, նա-

խորհ անհատի կեանքի մէջ է ծաճկուած, այս ինչպէսվէ, թէ կամենում են թէ մարդոց կեանքից և թէ աշխարհի կեանքից հեռացնել սատանային ներգործութիւնը: Բայց ինչպէս որ մենք վիսութեան ձակատագրութեան դէմ պնում ենք հաւատն առ Աստուածը, նոյնպէս բարոյապիսութեան ձակատագրութեանը դէմ պնում ենք հաւատն առ Աստուած, որ յանցաւորներին դարձի է բերում: Տարակոյս չկայ, որ Աստուած իւր սովորական ճանապարհներում գործ է դնում իւր դրած օրինքներն և աւելի յաճախ հոգիք գառնում են առ Աստուած միմեանց հետևող գործողութեանց շարքով, փորձերի և հրաւէրների զօրութեամբ: Շնորհաց Աստուածը կարդի Աստուած է և զարգացման օրէնքին հետևող դարձեալ, որ մենք բնական ենք կոչում, ոչ պատկաս հատատուն է լինում և հիմնաւոր: Բայց երբ կամենում է, Աստուած գործում է և՛ ամենակարողութեամբ և ժամանակը հպատակում է Նրան: Դուք չէք հաւատում յանկարծական դարձին, շնորհաց ներգործութեանը.. բայց ժամանակի որպիսի՞ սպառածութիւն կվերագրէք Աստծուն: Ժամանակ. բայց ի՞նչ է դա, հարցնում եմ ես, հոգւոյ կեանքում: Մի՞թէ չեն լինում ժամեր, որոնք մարդկային կեանքի տարիներին արժեն: Մի՞թէ չեն լինում այնպիսի վճռական րոպէներ, երբ կենդրոնանում են կեանքի և գործունէութեան բոլոր ոյժերը, որոնք ոչնչ չէ կարող չափել: Մի խօսքով մի՞թէ Աստուած կարօտ է ժամանակի իւր գործը կատարելու համար: Մի՞թէ նա այն Ամենակարողը չէ, որ ասաց, «Եղիցի լոյս» և եղև լոյս»: Ես հաւատում եմ Աւետարանին, որ վկայում է նորա յաղթող շնորհաց բազմաթիւ դէպքերին—դրա են բոլոր առաքեալներն, որոնք ամեն ինչ թողին և Քրիստոսին հետևեցին—դա Ղևին է, որ Մատթէոս դարձաւ, Սօղոմն, որ Պօղոս եղաւ, Սիմոնն, որ Կեփաս դարձաւ, դա աւազակն է, որ այժմ դարձել է և զղջացել: Նոյնը կպատահի և ձեզ հետ եթէ կցանկաք, դուք—բնաւորութեան գերի եք, որ անփոփոխելի եք համարում դուք գերի եք սովորութեանց, որոնք ձեր բնութեան մէջ դրած եք համարում դուք, որ կոչուած եք ազատ լինելու հաւատով, դուք՝ մեղաւորներդ և ակարներդ, կարող եք դառնալ հատատամիտ և հզօր,—դուք՝ հպարտներդ կարող եք դառնալ հեզ և խոնարհ: «Բայց եթէ ինչ ի Քրիստոս Յօր արարած իցէ, ի՛ր հինն անց, և արդ նոր եղև ամենայն: Այլ ամենայն ինչ յԱստուծոյ .... (եկր. կորնթ. ե. 17—18): Հաւատացէք ամեն ինչ նորոգող և վերածնող Աստուծն, խաւարի ամեն իշխանութեան դէմ գրէք Նորա ամենակարողութիւնն և երբէք մի յուսահատուէք ձեր հոգւոյ ապագայի մասին: Աստուծոյ շնորհաց աղբիւրն անսպառ է: Ծաղրածուին նա կարող է դարձնել հաւատացեալ, և չարաբաստկին զղջման և դարձի օրինակ:

Եթէ ես զարմանում եմ աւազակի զղջման վերայ, իսկ աւելի զարմանալի է թուում նորա հաւատը: Յաչելով Քրիստոսի մէջ նա տեսնում է իւր թագաւորին. բայց նա տեսել էր Նորա գլխին դրած ծաղրալի արձանագրութիւնն, որ արել էր Պիղատոսը, «Թագաւոր Հրէից»: Նա գիտէր, որ Քրիստոս իրան թագաւոր էր անուանում և նա տեսնում էր այս թագաւորութիւնն ու ողջունում է Նրան այն ժամանակ, երբ ամենքը նրան ոչնչացրած էին համարում: Նորա փշեայ պսակի ներքոյ նա տեսաւ—Նորա փառաց փայլը, Նորա չարչարանաց մէջ տեսաւ Նորա ամենակարողութիւնը, Նորա ատորութեան մէջ—Նորա յաղթանակը: Այն խաչն, որ վերջին դատապարտութեան զործին էր, եղաւ նորա համար այն, ինչ որ դարձաւ Նա, երբ նուաճեց բոլոր աշխարհը. Քրիստոս միայնակ է, Նրան չարաբաստում ամբոխը, Նրան պահարակում են քահանայք և գլխերք ... Քրիստոս չէ կարողանում զործել Նորա ձեռները բևեռած են խաչի վերայ: Նորա շրթունքները յամաքել են մահուան տագնապից, Նա բնաւ Իսրայէլի թագաւորի նման չէ, Նա, կարծես Ցէր Աստուած էյ, և ահա երբ Նորա գործը ըստ երևոյթին կորած էր թուում տեսաւ որ նա միայն սկզբ-

ումէ։ Ահա, եղբա՛յք, ինչ է հաւատան իւր բոլոր պարզութեամբ և մեծութեամբ։ Ահա նա (հաւատը) առանց տեսանելի ապացոյցի, առանց պաշտպանութեան երկրիս վերայ։ Բայց միևնոյն ժամանակ թափանցումէ անսահմանը, բովանդակումէ իւր մարգարէական հայեացքի մէջ ապագան և դարերին առաջնումէ, նրանց իւր հաւը թողնելով։ Ամեն ինչ նորա դէմ էր—ամրոցը, ծերերի և դպիրների թշնամութիւնը, աշակերտաց ցրուիլը, սարսափելի մահուան մօտաւորութիւնը։ Եւ այնու ամենայնիւ նա հաւատաց։ Խաբուեցա՞ւ արդեօք նա։ Ո՛չ, եթէ այդպիսի էր հաւատն աւազակի, որ միայն երկու ժամ տեսաւ և գննեց Քրիստոսին, ամօթ չ՚արդեօք մեզ համար եթէ մենք այլ ևս երկբայե՞նք։ Նա տեսաւ Քրիստոսին միայն տառութեան մէջ, իսկ դուք տեսաք Նրան վառած մէջ, նա տեսաւ անարգանքն, որով Նրան ծածկեցին մարդիկ, մենք տեսանք Նորա յաղթանակը։ Մենք տեսանք, որ այդ ամօթալի խաչը դարձաւ Աստուծոյ զօրութիւն մարդոց փրկութեան համար, մենք տեսանք թէ ինչպես հին աշխարհի դրկումն այս անբուժելի ցեղութեան խորքում նա կանգնեց նոր մարդկութիւն և ինչպես նա յանդուգն ազատութեամբ ազգին հրաւիրից դէպի հաւատոյ և յուսոյ կեանքը։ Մենք տեսանք թէ քանի՛ միլիոնաւոր մեղաւորների նա պղծութիւնից գարձրեց առ Քրիստոս յաւիտեանս։ Մենք տեսանք, թէ ինչպես այդ խաչը փոթորիկներից յետ, որոնք կարծես նրան պիտի խորտակէին, երևումէր աւելի մեծ փայլով և զօրութեամբ։ Այժմ մեր աչքի առաջ նա կանգնած է աշխարհիս ամեն սահմաններում և խեղճ հեթանոսների հոգիներում բեղմնաւորում է գարձի, ղջման և սրբութեան պտուղները, որոնք մեզ զուարճացընումեն։ Մենք տեսանք թէ նա որպիսի խիստ վշաերի դէմ մաքառեց, որոնց համար աշխարհումս մխիթարութիւն չկայ և յաղթումէր նրանց։ Մենք տեսանք, թէ ինչպես նա վերջին րոպէին խաղաղութիւն էր պարգևում այն սրաերին, որոնց համար, կարծես, յուսահատութիւնն յաւիտենական մահն և բաժին լինէր։ Մենք իրանքս էլ զգացել ենք նորա յաղթական ոյժը։ Մի օր և մենք կանգնեցանք այդ խաչի առաջ և այն օրուանից Աստուծոյ սէրը յայտնուեցաւ մեզ իւր բոլոր մեծութեամբ և մենք հպատակեցինք Նրան և յաղթուեցանք Նրանից և այնու ամենայնիւ այդ բոլորից յետոյ էլ մենք դեռ ևս նայում ենք ապագայի վերայ երկբայութեան տրտմութեամբ, մինչդեռ աւազակն ուղղակի դաւանում է խաչեալի արքայութիւնը, մենք դեռ ևս աստանդմամբ և վրդովմամբ մաղթում ենք նորա գալուստը։ Ութն և տասն դարերի ընթացքում ունեցած յաջողութիւնից ու յաղթութիւնից յետոյ, դեռ ևս մենք դժուարութեամբ հաւատում ենք, որ Նրան է պատկանում յաղթութիւնը։

«Յիշեա՛ զիս, Տէ՛ր, յորժամ գայցես արքայութեամբ քով»։ Ահա հաւատոյ աղօթքը, բայց շնորհք խնդրող հաւատոյ. արքայութիւնն, որին նա սպասումէ, ողորմութեան արքայութիւն է։ «Յիշեա՛ զիս», նա առաջևը տեսնումէ յաւիտենական դատաստանն, որով հետև մի քանի րոպէ ևս և ամեն ինչ նորա համար վերջացած կլինի այս աշխարհումս։ «Յիշի՛ր ինձ, երբ կկանգնեմ Արդար Դատաւորի դատաստանի առաջ, միայնակ առանց պաշտպանի։ Այս զարհուրելի րոպէին ... յիշի՛ր ինձ։ Որպիսի՛ զօրութիւն կայ այդ աղօթքի մէջ և որպիսի վերածնութիւն այդ մարդու մէջ։ Մի քանի վայրկեան առաջ նա անհաւատ էր և չարաբանող, իսկ այժմ լի հաւատով և անօղնականութեան զգացմամբ։ Նորա երկիւղից ու խղճի խայթից վրդոված հոգու մէջ թափանցեց սէրը, սէրն իւր անսահման հաւատով, որ արտայայտուումէ այս «յիշի՛ր ինձ» պարզ խօսքերով։

Ահա եղբա՛յք, շնորհաց գործը։ Ահա վերածնութիւն, որ միայն Աստուած կարող է կատարել։ Արդեօք գիտէ՞ք դուք, սրանից աւելի լաւ ու գեղեցիկ բան։ Դուք տեսած էք թէ ինչպես վերածնումէ բնութիւնը գարնան գալով. այնտեղ, ուր ձմեռը փռել էր իւր մա-

հաբեր վերմակին, այնտեղ, ուր սիրում էր անշարժութիւն, լռութիւն և արտաքին, յանկարծ տեսնում էք շարժողութիւն, կեանք և ուրախութիւն, դուք տեսած էք, թէ ինչպէս փայլուն երկնքի ներքոյ երկիրը ծածկուում է կանաչի ալիքներով, որոց գոգում հովից շարժուող ծաղիկները գոյն զգոյնի են տալիս, օդը անուշահոտութեամբ լցնելով. դուք տեսած էք, թէ ինչպէս երկրից, որ մեռած ու սառած էր թուում, նոր բուսականութեան զեղեցկութիւնն է ծաղկում. դուք տղջունած էք կեանքի այդ զօրութիւնն, որ յաղթել էր մահուան: Բայց այդ հրաշքներն ոչինչ են համեմատութեամբ հոգւոյ վերածնութեան հետ, որ մահից դէպի կեանք է անցնում հոգւոյ, որ կարճ ժամանակ առաջ մեղքերով լի, յանկարծ դառնում է դէպի սուրբ կեանք—որ դեռ կարճ ժամանակ առաջ բացի եսասիրական ձգտումներից ոչինչ չէր ճանաչում յանկարծ իրան Աստուծոյ սիրով ներշնչուած է զգում: Նրան լուսաւորում է նոր լոյս, նրան հաճելի է յաւիտենական յոյսը. սիրոյ հուրը սրբում է նորա բոլոր զգացմունքները, կրքերի փոթորիկները խաղաղում են և աստուածային խաղաղութեամբ է նա լցուում: Նա՝ այդ հոգին վերջապէս ճանաչեց ճշմարիտ կեանքը, որ չէ կարող խորտակել մահը, որովհետև այդ կեանքի աղբիւրի ակը Աստուծոյ մէջ է: Եւ ի՞նչ է հարկաւոր այս գործը կատարելու համար, միայն հաւատոյ, զղջման և խոնարհ յուսոյ հայեացք—աչք, հայեացք մեղաւորի, որ իրան դատապարտուած է համարում և ընկնում է յաւիտենական հնոցհայց—գեհենի գիրկը. «Յիշեա՛ զիս, Տէր»:

Եւ Յիսուս ասաց նրան. «Ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես ի դրախտին»: Այսօր - որպէս փութով— ասում է Բոսսիւէտը. ընդ իս — որպիսի հաղորդակցութիւն, ի դրախտին—որպիսի հանդիստ և անդորրութիւն: Եւ այս խօսքերն ուղղած են աւազակին. յանցաւոր գոյութեան մեղքերից չէտ նորա համար բացուում է դրախտը, սրբոց ընկերակցութիւնը և հաղորդութիւնը Աստուծոյ հետ: Այժմ իսկ թողութեան հետ ստանում է երկինք, այսօր իսկ նա յաւիտեան Աստծուն է պատկանում: Կհաւատայի՞ք արդեօք մեզ, եղբարք, եթէ այդ խօսքերն Սուրբն ու Արդարն ասած չլինեն, եթէ նորա արտասանած չլինէին խաչի բարձրութիւնից, ուր միացան խաղաղութիւն և արդարութիւնը և ուր Աստուծոյ սրբութիւնը յայտնուեցաւ իւր բոլոր անըմբռնելի մեծութեամբ: Բայց Աստծուն հաճելի էր, որ Որդւոյ Աստուծոյ խաչով փրկուած առաջին հոգին լինէր աւազակի հոգի և դրանով աւետուի մեզ, որ փրկութիւնը շնորհք է: Աւազակ, ոհ որպիսի մխիթարական գաղափար է: Խորհրդածենք այդ մասին, և նրանով ներշնչենք:—Աստուածային արդարութեան առաջ, հարցնում է Պօղոս առաքեալն—ի՞նչ տարբերութիւն կայ քո և մի ուրիշի մէջ: Աստուած մեզ ամենքիս դատապարտած է, որպէս զի ամենքին պարգեւէ շնորհք: Յանցաւոր մեզաւորները կամ բարեզործ մեղաւորները, առաջին կամ վերստանալիքդ ժամի մշակները—ամենքն էլ մի ապաւէն, ապաստանարան ունին—դա Աստուծոյ զթութիւնն է և շնորհքը: Թող խռովին դրանով փարիսեցու հպարտութիւնը: Այդ աւազակի և մեր մէջ ո՛րն է տարբերութիւնը: Դուք չէք կամենում նորա կեանքը գիտենալ, բայց և այնպէս ձերը գիտէք: Մտածեցէք այն բոլոր փորձութեանց մասին, որոնք չէիք ճանաչում այն խրատների ու շրջանի մասին, որոնք ձեզ շրջապատում էին, այն փրկութեան հոգսերի մասին, որոց առարկան էք եղած, այն հրաւէրների ու նախազգուշութիւնների մասին, որոնք ուղղած են եղած դէպի ձեզ: Մտածեցէք միանգամ այն մասին, թէ ի՞նչ կպատասխանէր ձեզ, եթէ մի օր, մի ժամ Աստուած ձեզ ձեր կամքին թողնէր. խորհեցէք այն բռնական հակամիտութեանց վերայ, որոնց յայտնութեանց համար մի առիթն էլ բաւական է, որ զործէիք ամօթալի զործ. մտածեցէք աւետարանքեան և նախանձի այն զրվիռների վերայ, որոց զոյութեան մասին ոչ ոք կասկած էլ չէր

տանում և որոնք չէին տանջում ձեր հոգին: Ո՛վ շիտակ մեղաւո՛ր, զննի՛ր կեանքդ Աստուածոյ սրբութեան լուսով. կշռի՛ր քո գործերդ ու մտածմունքներդ, և էլի մի անգամ ասա՝ եթէ կհամարձակես, այդ մեղաւորի առաջ, որին Աստուած պարզևեց շնորհք, ասա՝ եթէ կհամարձակես, թէ «դու այդ մարդուց աւելի լաւ ես»: Իսկ մենք ըստ Փրկչին դարձող աւազակին կասենք, որ մեզ հարկաւոր է նորա արդարացումն, նորա կատարեալ Թողութիւնը: Միայն նորա մէջն է մեր խաղաղութիւնն ու յոյսը:

«Այսօր ընդ իս եցես ի դրախտին»: Եղբա՛յք, Քրիստոս աւազակի առաջ դրախտը բաց արաւ. բայց և այնպէս չազատեց նրան չարչարանքից ու մահից խաչի վերայ: Նա չէ թեթևացնում նորա ներկայ չարչարանքները, չէ մեղմում նորա մահուան տագնապը:

Ընդունեցէ՛ք այս վերջին դասն ու խրատը, ո՛վ եղբայրք, որոց Աստուած հրաւիրում է չարչարանաց համար: Ձեր վշտերը յաճախ վրդովել են ձեր հոգին, յաճախ ծանծկել են ձեզնից Աստուծոյ բարութիւնը: Ի՞նչպէս կարող կլինէիք հաւատալ, թէ նա ձեզ սիրում է, երբ նա ըստ երևոյթի ձեզ ձեր բաղդին էր թողած, երբ ոչ արտաքին թեթևութիւն էր վիճակում նորա նախախնամութեան, երբ դուք էլ այլոց նման պարտաւոր էիք նորա տեսանելի խստութեան դառն բաժակը գաղարկել: Աւազակը վրկուած է, բայց և այնպէս նա չարչարուում է: Նորա առաջ բաց է դրախտը, բայց նա էլի մնում է բևեռած խաչի վերայ: Նորա առաջ բաց է յաւիտենականութիւնը, բայց նորա մահուան պատիժը շարունակուում է: Այո՛, նա չարչարուում է, որովհետև Տէրը նրան չխոստացաւ երկրաւոր երջանկութիւն, չխոստացաւ ազատութիւն երկրաւոր տանջանքներից, նա չարչարուում է, կարծես թէ Աստուած էր սիրում նրան: Բայց մտածո՛ւմ էք արդեօք. նա հո իւր Փրկչի հետ միասին է չարչարուում...: Ո՛հ երջանիկ չարչարանք, ո՛վ կցանկանայ նրանցից հրաժարուելու: Նա չարչարուում է, բայց նորա մահատիպ աչքերը տեսնում են նրան, ով իրան զոհ բերեց նորա փրկութեան համար: Նա գնում է թաղուելու նորա հետ միասին. միթէ այդ շատ և շատ բաւական չէ նորա հետ միասին չարչարուել ցանկանալու համար: Միթէ դորա համար շատ բաւական չէ նորա չարչարանաց վկայ լինելը, նորա հետ միասին լինելը ընդհանուր նախատանքի, հայհոյանքի և նորա մխայնութեան միջոցին: Ահա եղբարք, ձշմարիտ քրիստոնէի չարչարանքները. ահա սա է բացատրում ձեզ այն ուրախութեան եռանդն ու ջերմ աղօթքները, որոնք դուք տեսաք ծանր կեանքի և աննպատակ վշտերի ժամանակ: Այսօր ինձ հետ խաչի վերայ, այսօր կլ ինձ հետ դրախտում ու փառաց մէջ ես— բայց թէ խաչի վերայ և թէ փառքում եղբարք, նորա հետ լինենք, միշտ նորա հետ:

(ՌԵՐՍԻԷ)

# ՊԱՏՄԱԿԱՆ

## ԽՃՈՒՂԻ

(Շարունակութիւն) *

Ադրեանդայ երկրորդ արքունական նոր խճուղին է իրանայ ճանապարհն, որ Տրապիզոնից կարին կարնից Բասենի միջով կանցնի Տէլի—Բաբա գիւղի 1/2 ժամ հարաւից, կը մնայ Գյուրա—Տերպէնտ (Սև—կիրճ) կոչուած նեղ և երկու կողմից ժայռերով ու զոհայեաց չափազանց բարձրաց սեռ սառոյի ազդող կիրճն, 3 1/2 ժամուս չափ խոր կրճի մէջ էշեկից լճնող ձորակի հետ բարձրանալով

*) Տե՛ս նախընթաց համարը:

1. Այս կիրճն երկու խոր ձորակներու կը բաժանուի. երկու ձորակներն Գարատերպէնտի մօտ իրար կը միանան. ձախ կողմից իջնող ձորն Ղըզլ Տէրպէնտ կասուի:

խալեպի լեռնաշաջան, որ ընդարձակ սա-
բաճումբիւն մի բռնած է Բագրեանդայ դաշտի
արեւմտեան բարձրավանգակին վերայ, տակաւ
առ տակաւ բարձրացանք Դահար քրդաբնակ
գիւղն, որ խալեպի հիւսիսային կողմն խո-
ճուղոյն վերայ գանուած առաջին գիւղն է,
որ Ալաշկերտի վիճակին կը պատկանի և կայ
Դեամ լեռներու ստորոտն։

Մեր ճանապարհն Գարաաերպէնտից մինչև
Դահար 6 - 7 ժամ արևելեան հարաւային ուղ-
ղութեամբ էր, նոյն ուղղութեամբ Դեամ լեռ-
ներու հարաւային կողերն 3 ժամ քերելով
խաւտրմի ջրի հետ իջանք Քիւրդ - Ալի քրդա
բնակ գիւղն. ասոր և խճուղոյ հետ մեր ու-
ղին շարունակեցինք ½ ժամ ի հարաւ, ճա-
նապարհիդ դուրս դէպի աջ թողլով խալեպի
վերջին Աբուզէթ գիւղն, հոնտրհեցանք 2 ½
ժամու չափ, իջանք Ալաշկերտի դաշտի ա-
ռաջին գիւղն Զեռլկան՝ մեր աչն թողած լի-
նելով Տանձուծկներու բարձրութիւնը և ձա
խը կուռիս[1] լեռներու կողերն, արևելեան
հարաւային ուղղութեամբ իջանք։

Ճանապարհը Զեռլկան գիւղի մէջ երկուքի
կը բաժանուի, բուն խճուղին դաշտի միջով
նոյն ուղղութեամբ կանցնի Խոշեան, Մուրի
գիւղերու միջով, կաւղղուի Շեռեանի ձախ
ափի վերայ գանուած Զըլկանի (քառասուն
աղբիւր) հայ գիւղն ձախ թևի վերայ թողլով
Մոլլա — Սիւլէյման հայ գիւղի, Մուրիի և
Շամեանայ քաւշանը, նա և Աչի վերայ թող-
լով Շեռեանայ գլուխն, Խոշեան, Խասուր,
Կարսան, Դաւոյ, և ... գիւղօրէից քաւշան-
ները։ Զըլկանի գիւղից յարևելս ուղղուեցաւ
ճանապարհն Շեռեան գետոյն ձախ ափի մեր-
ձականերից, անցաւ Ղազի, Մոլլա Օղման,
Բօշիկ և Դամղնան գիւղերու մօտէն, մինչև
Դամղնան 3 ½ ժամ երկարելէ յետոյ, գար-
ձաւ արևելեան հիւսիս մի ժամից և ս գա-
բարիլիսէ հարաւային եղրն հասաւ։

Զեռլկան գիւղից մինչև Գարաքիլիսէ ար-
քունական խճուղին է, որ կարաւանը կեր-

1. Երկու կոհիներ կան, միւսն մերձ է Բօշմէ-
փէ լերան։

թևեկէ, ուղիղ ճանապարհն է որ կանցնի
դաշտիս հարաւային եղրից, իսկ կայ մի այլ
ճանապարհ և ս որ Զեռլկանից կը բաժանուի
յարևելս, կանցնի Մոլլա - Սիւլէյման գիւղից,
կը մտնէ Թօփրագ - գալէ (վ.ալարշակերտ)
ուր կը նստի Ալաշկերտի կառավարիչը (դայ-
մագամ), ուստի կը դառնայ արևելեան հա-
րաւ, դաշտի միջով կը պատահի Ղայաբէկ,
Խրիցու, Քարձոր, Հիզան գիւղօրէից, կը մըտ-
նէ Գարաքիլիսէ և կը խառնուի խճուղոյն։

Երրորդ ճանապարհն և ս դաշտիս հիւսի-
սային եղրէն կանցնի, Զեռլկան, Մոլլա - Սի-
լէյման, վ.ալարշակերտ, Խաչու, Ամաա, Աշ-
խալի - Երանոս հայ գիւղերու միջէն, կը դառ-
նայ ի հարաւ, կը մտնէ Գարաքիլիսէ։

Մեր ճանապարհը Զըլկանի գիւղից մինչև
Դամղնան Շեռեանայ ձախ ափն ի վայր էր,
Դամղնանից մինչև Գարաքիլիսէ ջոր գետի
աջ ափն ի վեր է. այժմ մենք անցանք ջոր
գետից, մեր ճանապարհն ուղղուեցաւ արև-
ելեան հարաւ, տակաւ առ տակաւ մօտեցաւ
Մուրատի աջ ափին, անցաւ Ըօնճալու, Ղա-
զի գիւղերու միջից՝ Զիրոյ և Եքմալ գիւղե-
րու հարաւից. բռնեց Մուրատի աջ ափը.
ջրիվեր ըստ ջրի բացած ընթացքին ոլոր մո-
լոր մինչև Ներքին Դաշլիչայ պարսկաբնակ
գիւղն, ջրի հանդէպ թողուցինք Սօֆեան,
Կեռավեան (խո-վէր), հօլաստր պարսկաբնակ
գիւղերը ձախ կողմերնիս Սինակ լեռներու
կողերու ստորոտներն և տասնի չափ քրդա-
բնակ գիւղեր։

Գարաքիլիսէից մինչև Դաշլիչայ 5 ժամու
չափ կը տևէ ճանապարհն։

Խճուղին Դաշլի չայից յարևելս կը բարձ-
րանայ, տակաւ առ տակաւ Մուրատից կը հե-
ռանայ, մէկ ժամ հեռաւորութեան աջ կող-
մը կը թողու Ալիկոռ պարսկաբնակ գիւղն
և գարձեալ տակաւ առ տակաւ Նպատայ հի-
սիսային ստորոտը գանուած կամուրջին[1] կը
մօտենայ, կամուրջը աջ կողմ թողլով երեք
ժամ և ս Զիրուայ պաշտից անցնելով Դիա-

1. Այս կամուրջը միայն վանքի համար շինուած է։

տին կը հասնի, ուսոտից յարձակելս ուղղուելով Խիւեկայ կետուկով Պայազիտ կուղղուի, կանցնի Պարսկաստան։

## Վ Ա Ն Ո Ր Ա Յ Ք։

Բագրեւանդ ի նախնեաց ունեցած է բազմաթիւ վանքեր, որպէս բերդերն գաշտային մասին մէջ չեն տեսնուիր նաև վանքերու հետքեր և այլ բարձր վայրեր, լեռներու գագաթներու վերայ, գեղեցկագիր հովիտներու մէջ դեռ կը տեսնուին շէն և աւեր սրբավայրեր, որոց իւրաքանչիւրը ունի իւր հիանալի տեսարանն, որ մնուրատատուր սրբի հետ ջերմեռանդ ուխտաւորին հոգի և կեանք կը ներշնչէ, որոյ նեղ հորիզոնը կընդլայնէ։

Բագրեւանդ միշտ պատերազմներու աստարէզ դարձած և այս երկիրը հրոսակային խմբերու արշաւանաց ճանապարհի վերան գտնուելով ժողովուրդն ստիպուած է միշտ տեղափոխուիլ, յայլուր գաղթել կամ լոյս տալ, որով թողած է իւր սիրած շէն և հսկայ եկեղեցիներն ու վանքերը և հեռացած։ Նորեկ ժողովուրդն շատ անգամ հեռի գտնուելով այս հրաշալի սրբավայրերէն ըստ արժանւոյն չէ կարողացած հսկել որոց վերայ, որով տակաւ առ տակաւ ուխտագնացութիւնը դադարած՝ օր ըստ օրէ քայքայման վիճակի հասած են այս նշխարն հոյակապ վանօրայք որք ժամանակին պարծանք էին հայ ժողովրդեան։

Այն բազմաթիւ վանքերն որք ժամանակ մի շէն էին, որոց իւրաքանչիւրն ունէր իւր մխիթարութիւնը և գլուխը, իւրաքանչիւրի շուրջը կենդանութիւն և կեանք կայր, ուսաի ջերմեռանդութեան հուրը ամեն կողմ կը սփռուէր, ամեն կողմէ ծերք և երեխայք, կանայք և հարսունք, երիտասարդք և օրիորդք կարաւանի նման խումբ խումբ շարուած ուխտի կգային, որոց իւրաքանչիւրը շինութեան մի յիշատակ կաւելացնէր իւր սիրած սրբին, ու. կը մեկնէր գոհ սրտով, լի հաւատով իւր մուրատն առած. բայց աւա՛ղ, բիւր աւաղ, այս օր այդ վանքերու մեծամասնութեան շուրջն ամայութիւնը պատած է, հայկական մի շշուկ չլսուիր, ուխտաւորներու աղօթքի փոխան վայրի կենդանիք որջացած են մէջը, ամանք և ոչխարայց գոմ դարձած. այս բաւ չէ. ուխտաւորներու նման կարգ կարգ ժողովուրդ բահ և բրիչ յուսան, դէպի վանք կը մերձենան. գու կը կարծես թէ ջերմեռանդ ուխտաւորներ են դաքա, բայց կը սխալուիս. դորա փոխանակ սրբայրի որմերը համբուրելու, յարգանք մատուցանելու, ըլչի հարուածներ կուտան այն որմին, որ մեծ աշխատանքով և քրտամբ կանգնած էր։

Այս նորաձև ուխտաւորներուն մին տեսար, որ մեծ ճգամբ տապալեց մի կարմիր որբատաշ քար, ուրիշը գեղին, միւսն սպիտակ, մի այլն գորշ, մէկն և այ մի նշխուած քար. որ ամեն մէկին վերայ վարպետն մի ամիս աշխատանք թափած էր, ուշք և միտք հագնեցուցած։

Չտեսեղեցին այդ թանկագին քարերն տայլերու վերան և կարծես քուրդն այդ քարը մի յարմար շինութեան մէջ պիտի գետեղէ.— ոչ, քուրդն ինչ գիտէ դորա արժէքն. նա պիտի գետեղէ այնպիսի վայր ուր հարկ էր կոշտ վայտ մի. նա շինած է շէմք կամ դռնգի և կամ մնուրի առջև յարմարցուցած է։

Գիտէ՞ք արդեօք այդ քարերու վերայ քանի քանի գրուած յիշատակարաններ խառնուած են ալբանոց, քանի քանի բարերար անձինք, որք արժանի էին պատմութեան առջև հսկայաբար և պարծանօք երևան գալ, բայց աւա՛ղ, բիւր աւաղ, որ այսօր վոշինիներու հաւասարած, մոռացութեան մատնուած են. դեռ նորա կմախքները կը ցնծան թէ իւր յիշատակը ժողովրդեան առջև կանգնած է վառապանծ։

Ահա այս տեղ կը ներկայացնեմ այս տեսակ վանքերու հետ մի քանի շէն վանքերու համառօտ ցուցակն։

1. Խարաճանայ Ս. Յովհաննու վանքը որ Պռճօի կետուկին հարաւային երեսին վերայ

կը գտնուի, մերձ Խնուսայ և Մանազկերտի ոահմանին. Խնուսցիներէ, Մանազկերտցիներէ, Անգափցիներէ և Բագրեւանդցիներէ յարգուած որբավայրս, որ հսկայ շինութիւն մէր, սեւ, կարմիր, սպիտակ, գորշ և կապոյտ քարերով հիւսուած, քարերն գեղեցիկ կոփածոյներով զարդարած, մի աւուր ճանապարհ հեռուն ջերմեռանդ ուխտաւորին աչքին կառնէր նորա հսկայ շինութիւնը, որտառուղ մրմունջ մի կը հանէր իւր շրթներէն, երեան խաչակնքելով ուրախ զուարթ առաջ կը գնար, իւր ջերմ հաւատքով անմիջական օգնութիւն առած լինելով Ս. Յովհաննիսէն և իւր հոգնած ծնկներն զօրութիւն նաև գտած։

Ախալխի վանք մի որ 35—40 տարիներէ ի վեր անտէր թողուած և Անգոլի գաւառակին պատկանելուն և լեռնային մի վայր լինելով նաև այս գաւառակին մէջ և այ հայի նշոյլն անգամ չգտնուելով անխնամ մնացած է և գրեթէ շարունակ Սիպիքանցոց ցեղին պատկանող Թոռուն կոչուած քուրդ ցեղապետներուն հսկողութեան ձեռք մնացած էր, որք այս հիանալի շինութեանց վերայ պարտաւորուած էին հսկել, մինչև 1880—84 թուականը։ Ա. այս թուականին կարսայ կօղայից գալթող թերթերեմ թուրքեր կսկսեն քանդել, Թոռունները կը դիմադրեն, թուրքեր պաշտպանութիւն գտնելով կը քանդեն։

Քանդելու միջոցին խորանի տակից մի դուռ կը բացուի. ներքևը ժայռին մէջ կոփուած 30—40 սենեակ կը յայտնուի. ամբողջ սեն եակներու մէջ յարևելից ժայռի միջէն բացուած մի լուսամուխ լոյս կթափանցէր։

Ա. այս հիանալի վանքը չորս ժամ հեռուից տեսած եմ իսկ մօտից տեսնող գիւղացիք հիասթափուած կը պատմեն։

«Սօղանլուայ մէշի մէջ, Անի քաղաքին մէջ տեսած էնք (էի) շատ վանքեր, ընանք գո՜ր, էսի գո՜ր. իսկի խարաճանայ վանքի խորոտակութեն տեղ չգտնուիր, լեզու պէտք ա թարմի էնայ (մանրակրկիտ նկարել), խելքից մտքից դուրս ահաւ ահայիսի (չափազանց հիանալի) բան մայ։

2. Տէրիքայ Ս. Աստուածածինն, որ կը գտնուի Ղլիճ կետուկի հարաւային կողերուն վերայ. սա չունի Իչքիլիսայի վանքի հսկայ շինութիւնը, բայց ճարտարապետական ընտիր շինուածք ունի. վանքն այս օր կանգուն է. ոչխարաց գոմ դարձած։ 1877 թուականներուն այս տեղ նղոիք կը բնակէին, նաև միաբանութիւն հաստատուած էր, ունէր կալուած. պատերազմի միջոցին միաբանութիւնը խոյս տուեց, 1881—82 թուականներուն և նղոիք գաղթեցին ռուսական հողը, որով վանքս մնաց աւերակ։ Սորա համար կը պատմեն թէ վենետկոյ Մխիթարեան վարդապետ մի եկած կաթուղիկէի մէջ գտնուած պահարանի տեղն գտած մեծ հնութիւններ առած՝ տարած է այս 35—40 տարուան միջոցին,

3. Ոսկեանք.—Ա. այս որբավայրն որպէս կը պատմեն 1830—40 թուականներուն առաջին ուխտավայրն էր, կը գտնուէր Բագրեւանդայ յարևելս Դիատինայ ի հարաւ, Ծաղկանց լեռներու մէջ, որ այս օր այդ կողմերն հայ բնակութիւն չլինելով ուխտագնացութիւնը դադարած է, միայն այդ որբավայրի մօտից անցնող ճանապարհորդն աւազակաց երկիւղից հազիւ հազ մի խաչ կհանէ երեսն, արագ քայլերով կհեռանայ։

4. Սուքիասեանք.—Ս. Սուքիասեանց որբավայրն որպէս գիտենք, կը գտնուի վոքր Սուկաւէսի կողերուն վերայ, ուխտագնացութիւնը կը շարունակուի շնորհիւ սոսրոտն գտնուած քանի հայ գիւղացւոց, մանաւանդ աւելի մօտն գտնուած Մօլլա-Սիւլէյման գիւղի, որոյ մեծ մասն հայ հռոմէական են, որոց վարդապետներն տարան գրէթէ ամեն կիւրակէ անդ պատարագ կը մատուցանեն, որոց մատուռին կից այլ մատուռի մի մէջ և այ հայեր պատարագ կը մատուցանէին 1877 թուականէ առաջ։

Վարդավառի և Ս. Գէորգայ տօներին մեծ բազմութիւն կը լինի, գաշտիս ամեն գիւղերէն խումբ խումբ հայեր կը հաւաքուին։

5. Բագաւանի (Իչ-քիլիսայ) Ս. Յովհաննու վանքն.—Ա. այս հռչակաւոր և հսկայ շինու-

թիւնը կայ Նպատ լերան հիւսիսային սահրոտը, Մուրատ գետոյն ձախ ափին վերայ, Ջիրաւայ գաշտի արեւմտեան կողմն, ունի միաբանութիւն, վանահայր եպիսկոպոս, և ընդարձակ կալուածներ, որոց ծայրն մինչև Գայլատոյ ծովակն կը հասնի։

Այս շէն և հիւրասէր վանքը գրեթէ յետնարան մի էր Բագրեւանդայ ժողովրդեան համար, մանաւանդ իւր շուրջը գտնուած 4—5 գիւղացւոց համար. սակայն այս երկու տարուան մէջ տեսնելով որ վանքն և նեղ դրութեան մատնուած է, ժողովուրդը լքուած աչք տնկած է գաղթականութեան։

Այս վանքը տեղ տեղ սկսուած է քանդուիլ, նորոգելու անհրաժեշտ պէտք ունի։

¶6. Խստուրայ Ս. Աստուածածնին. — Սա այժմ եկեղեցի է խստուր գիւղի և վանք Ալաշկերտի դաշտի հայ ժողովրդեան համար. որպէս գիտենք, կը գտնուի արեւմտեան դաշտի արեւմտեան կողմն։

Ովատացնացութիւնը Ս. Աստուածածնի և Ս. Գէորգայ տօնին կը լինի։

Գիւղիս հիւսիսն գէչ բարձր գիրքի մի վերայ կառուցուած է վանքս. սուրբ կաթուղիկէն քանդուած է, որմերն ցոյց կուտան, որ հինաւուր շինութիւն մը ունէր, քանի յիշատակարաններից կերևի, որ Շինող Հայրապետի ձեռօք շինուած լինելու է, նաև պատմութիւնն և յիշատակարանի թուականին ապացոյց մէ. «Ես շինեաց սա և եկեղեցի Սուրբ Աստուածածնի ի վայրշակերտ և վանն այսպիսի բազում շինութեանց կոչեցաւ իրր յատուկ անուամբ ներսէս Շինող. թէպետ և զոր մի անգամ շինեցաւ, գրեթէ ամենայն եղծաւ ի հագարացւոյ»։

Ըստ աւանդութեան վանքս երկու անգամ հրդէհի մատնուած է. մին Լենկթեմուրի միջոցին, երկրորդն մօտ ժամանակներս, եկեղեցւոյս ներքին շինութիւններն և յիշատակարանն ևս ցոյց կուտան, որ երեք անգամ նորոգուած է։

Եկեղեցւոյս հարաւային կողմ բացուած գրուան մօտ կայ մի խաչ քար կանգնած, որոյ ստորին թևի վերայ եռանկիւնաձև կոխուած ու մէջը արձանագրուած է. «Ի Թուականութեան Հայոցս ՈՁԹ ին կանգնեցաւ սուրբ Նշանս ի բարեխաւսութեան մորգարէիդ, որք ընթեռնուք, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ղՁեզ յիշէ։

(Կը շարունակուի)։

Ս. ՀԱՑԿՈՒՆԻ։

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՊԼԱՏԱԼՕՑՅՈՒՆ ԴՈՐԹՈՒՆԷՈՒԹԻՒՆՆ ԻՎԵՐԴՕՆՈՒՄ։

(Շարունակութիւն) *.

Նայելով, որ Պլատալօցին արդէն եւրոպական հռչակ էր ստացել, որ պէտք է նրան մարդկութեան դասի արարչի սիրտը տար՝ ընկաւ և թշուառ վախճան ունեցաւ այն ուսումնարանը, որ նա հիմնեց Իվերդօնում։ Այդ անկման պատճառները յիշում է Հայր Փիլարը։ Ներքին պատճառները բարդուեցին ուսուցիչների անհամաձայնութեանց հետ։ Այն սէրը, որ իշխում էր մեր մէջ, ասում էր Պլատալօցին իր աշխատակիցներին, անյեսացել է և պէտք է անյեսանար։ Մենք չը չափեցինք այն ոյժը, որ պահանջում էր սէրը։ Յարատեւելի վիճաբանութիւնները սպիսեցին Պլատալօցցուն հեռանալ այդ տեղից։

1825 թ. երբ նա 80 տարեկան էր՝ գնաց Նոյհօֆ։ Տիկին Պլատալօցցին, որ շատունակ խրախուսում էր իր ամուսնուն՝ վախճանուել էր 1814 թուին Իվերդօնում։ Պլատալօցցին ապրելով Նոյհօֆում՝ գրեց «Կարապի երգը» և «Իմ ձախատագիրը»։ Նա այդտեղ հանդստանում էր օրական 6 ժամ, իսկ մնացած ժամանակ գնում, այրուբէն էր սովորցնում Բիւրի ուսումնարանում։ Վերջապէս այդ պատկառելի ծերունին վախճանուեց 81 տարեկան հասակում այն սխրութիւնից, որ պատճառեց նրան Բիբլի գրութիւնները։ Բիբլը այդ գրուածներում յարձակուում էր նրա բնաւորութեան, կրօնական զգայմանց և մանկավարժական եղանակների վերայ։

* Տե՛ս. նախընթաց համարը։

Այս աշխարհում այդ եղաւ նրա վարձատրութիւնը այն անսպառ և անձնուրաց աշխատութեան համար, որ նա կատարեալ յօդուտ մարդկութեան բարօրութեան։

Խորհուրդ ենք տալիս կարդալ Պէստալոցցու կենսագրութիւնը, որ նկարագրում է նրա մանկավարժական գործունէութիւնը, նրա կրօնական և բարոյական նուրբ զգացմունքները և այն ժամանակ կտեսնէք, որ նրան կարելի է համարել կատարեալ մարդու մի գեղեցիկ տիպար։

Հայր Գէօթէ ծնուեց Ֆրանկֆուրտում 17 դեկտ. 1765 թ. սկզբնական կրթութիւնն ստացաւ հայրական տանը, և այն յիշողութիւնները, որոնք ստացուել էին նրա մէջ իր հօր տանը՝ շատ վառ էին մնացել նրա սրտում։ Կասկած չը կայ, որ այդ յիշողութիւնները ներգործած կը լինէին նրա գաղափարների վրայ։ Կրթութիւնը նրա համար միայն մէկ նպատակ ունէր, այն է՝ ներքինին դիտակցաբար բարձրացնել և հասցընել մայրական բնազդմանը։ Շատ քիչ մարդիկ կան, որոնք հասկացած լինէին այն կարևոր դերը, որ Աստուած նշանակել է դերդաստանի համար։ Նա ասում էր, որ հաւատը կապուած է դերդաստանի հետ, որովհետև յայտնում է որպէս որդիական զգացմունք և բարձրացնում է դէպի երկնային Հայրը։ Պէտք է մտաբերել, որ այդպէս էր կարծում նա և Պէստալոցցին։

Թիւրերը երբէք չէր կարողանում բաւականանալ նոր դիտութիւններ ձեռք բերելով, նա միշտ կարևոր էր համարում մտահոգութիւն սեպհականութիւն դարձնել այն բոլորը՝ ինչ տալիս են դիտութիւնները և գիտութիւնը։

1804 թ. Ֆրկյբուրգի վարչութիւնը Հայր Թերարին նշանակեց տեսուչ նախապատրաստական ուսումնարանին, որ սկզբում 40 աշակերտ ունէր։ Հայր Թերարի յաջող վարչութեամբ աշակերտների թիւը հասաւ 300—400-ի։ Հայր Թերարը օրիորդաց ուսումնարաններ էլ բանալ տուեց, որոնց մէջ աշակերտուհիների թիւը շուտով նոյնպէս 300—400-ի հասաւ։

1809 թ. Պէստալոցցին խնդրեց դաշնակցական աւագ ժողովից նշանակել մի յանձնաժողով Իվերդօնի ուսումնարանը քննութեան ենթարկելու։ Հայր Թերարը մտնակցում էր այդ յանձնաժողովին և հինգ ինքն էլ պէտք է զեկուցումն տար։ Այդ հանգամանքը մեծ ներգործութիւն ունեցաւ Թերարի մանկավարժական հայեցակէտի վերայ։ Իվերդօնում նա կարողացաւ ըմբռնել Պէստալոցցու մեծ դաղափարները և մտահոգութիւնը, որ բացէց նրա առջև մի նոր հորիզոն։ Հայր Թերարը Ֆրկյբուրգ վերադառնալով դործադրեց Պէստալոցցու գաղափարները ամենայն յաջողութեամբ։ Կրթութիւնը ենթարկեց նա բանական կարդադրութեան քայլ առ քայլ հետևելով խելքի զարգացմանը, որ Պէստալոցցին դրել էր որպէս հիմք իր դաստիարակչական ձևի։ Կրօնի դաստատութիւնը սկսում էր Աստուծոյ յայտնութիւններով և յետոյ աւելի լրացնում ու վերջապէս տալիս էր հասակաւոր աշակերտներին կարևոր բացատրութիւնները։ Նոյնը կատարուում էր թուաբանութեան վերաբերութեամբ, չորս գործողութիւնը սովորցնում էին միևնոյն թուերով, յետոյ նոյնը աւելի մեծ թուերով, և վերջապէս միևնոյնը՝ կատարում էին զանազան թուերով։ Լեզուն ուսանելու համար հինգ առաջին դասում սկսում էին երեխայի ուշադրութիւնը բևեռել մէկ նախադասութեան վերայ, որ արտայայտում էր մի ամբողջ միտք և յետոյ կարելի էր լինում տեսնել թէ ինչպէս մարդկային խորհուրդները հետզհետէ, բարդուում են, որի ամբողջ կազմակերպութիւններ, հինգ սկզբից որոշած և նախապատրաստած էին։ Հայր Թերարի ուսումնարանում, համաձայն Պէստալոցցու տուած ծրագրին, դաստատութիւնը ասոլիճանաբար կարդադրուեց և բացի այդ՝ Թերարի առաջնորդութեամբ այդ ուսումնարանն ունեցաւ գործնական և բարոյական կառավարիչ։ Թուաբանական խնդիրները վերաբերում էին կեանքի պահանջներին և ծանօթացնում էին անային անտեսութեան հետ։ Պատմութեան դասերից եղրակացնում էին բա-

բոյական հիմունքն, աշխարհագրութիւն դաս տալիս զարգացնում էին ողորմածութեան, բարերարութեան զգացմունքը դէպի մարդկային սերունդը և բացատրում էին քրիստոնէութեան շնորհքը, օգուտը: Բնագիտութիւնն ուսուցանելիս կենդանի կերպով ցոյց էին տալիս, ապացուցանում էին Աստուծոյ իմաստութիւնը և մեծութիւնը: Լեզուն, որպէս մեր մաքերի և զգացմանց արտայայտիչ՝ պէտք է ենթարկուէր ընդհանուր, ներդաշնակ զարգացման և լինէր ամենաազդու միջոց, որով պէտք է ներմուծուէր երեխայի խելքի մէջ բարի և օգտաւէտ դաղափարներ, զգացմունք և բարոյական ու կրօնական դաղափարներ:

Հայր ժերարը ցանկանալով մարդել երեխայի խելքը, կամենում էր մատակարարել նրան օգտաւէտ գիտութիւններ և տալ երեխայի մտածելու եղանակին, զգացմունքին, կամքին լաւ ուղղութիւն: Այս տեղից հետևում են նրա հետևեալ խօսքերը, որոնք վերնադիր դարձան նրա մանկավարժական գրուածքի և որոնք նրա մանկավարժական դաղափարներն են ամփոփում: «Խօսքերը մաքի համար են, իսկ մաքերը սրտի և կեանքի համար»: Մանկավարժութեան մէջ իւրաքանչիւր խօսքը պէտք է հասկացուի և իւրաքանչիւր դաղափար պէտք է յարմարեցրած լինի կեանքի դաստղան պահանջներին:

Հայր ժերարն իր պատուական աշխատասիրութեան մէջ, որի վերնադիրն է «Մանկավարժական դաղափարներ մայրենի լեզուի մասին», ընդունում է որպէս սկզբնադէտ մայրական բնաղդումը, և որովհետև այդ մի բնական զգացմունք է, այդ պատճառով էլ արժանի է մեր ամբողջ ուշադրութեանը: Երեխային խօսել սովորեցնելիս՝ մայրը ցոյց է տալիս առարկաներ և նրանց անունը տալիս է, նա երբէք չի ծանրաբեռնում խօսքերն: Այդ խօսքերը երեխային միշտ մի բան են սովորեցնում: Մայրը չի սովորեցնում նրան այդ խօսքերի արտասանութիւնը, այլ ցանկանում է միայն մի բան սովորեցնել, նա կանգ չի առնում լեզուի տարրերի վրայ, նա աշխատում է միայն սովորցնել: Բարեպաշտ և քրիստոնեայ մայրը կրթում է իր զաւակն այնպէս, որ նա լինի բարի, առաքինի, աստուածապաշտ: Ահա դրանք են մայրական կրթութեան և սիրոյ ղեկաւոր և խոկական դրօշմը: Հայր ժերարը օգտաւում է այդ բնական տուրքից և իր «Մանկավարժական դաղափարներ»-ում բացատրում է այդ բնազդումը, որ յարմարեցրած պէտք է լինի երեխայի բոլոր պիտոյքների համար:

Ահա թէ հայր ժերարն ինչպէս է կազմակերպում իր յօրինակարգը (սիստեմա) «Կամքը կրթելու ուղիղ ճանապարհը միշտ բաց չէ, ուրեմն մի ուրիշ ճանապարհ էլ պէտք է դտնել»: Հոգերանութիւնը դրա վերաբերութեամբ առաջարկում է մեզ հետևեալ մի նշանաւոր դործնական սկզբունք (մաքսիմ), այն է՝ մարդս դործում է ինչպէս նրան հաճելի է և ինչպէս նա ստիպում է: Այս երեք խօսքը յայտնում են մեզ այն դաղափարը, որ մեզ համար կարևոր է կանոնաւորելու այն աշխատանքը, որ մենք սկսելու ենք: Յանկանում էք իմանալ, թէ ինչ պէտք է անէք, որ երեխան աստուածապաշտ, բարի և ազնիւ լինի, նկատի ունեցէք նրան՝ մաքուր, բարեսէր, ազնիւ ձգտումներ, որովհետև մարդ ձգտում է այն բանին, որ նրան հաճելի է: Ինչպէս պէտք է նկատի ունենալ նրանց այս ձգտումները: Յանձնարարում էք աշակերտներին այդ դաղափարների հետ, բացատրեցէք օրինակներով դրանց կարևորութիւնը և օգուտը կեանքի համար: Դաղափարները և վարքը մտածողութեան արդիւնքն են, այս մի օրէնք է: Սակայն այս օրէնքը բացատրութեանց է կարօտ, որովհետև ազատութիւնը չէ կարելի կաշկանդել, այլ միայն պէտք է նրան ուղղութիւն տալ: Ուղղութիւն տալու աշխատանքը երբէք չի լինի բոլորովին անյաջող, արդիւնքը չի լինի անվրէպ (անսխալ): Այդ լաւ միջոց է, որ պէտք է դնահատենք:

Մարդիկ միշտ պէտք է յուսան Աստուծոյ ողորմութեան վրայ, որովհետև նա միայն կարող է զօրացնել մարդուս կամքը բարեդործութեան համար:

Նաֆել 1784 - 1846· Հայր ժերարի գրուածք-

նները կարող են համարուել Նաւիլի մանկավարժութեան ամենալաւ յառաջաբան։ Նաւիլը որ վէրնիւեում գտնուած ուսումնարանի տեսուչն էր, մի նոր ուղղութեամբ ուսումնարան չէր հիմնել, այլ շարունակում էր ժէրարի ուղղութեամբ, որի մանկավարժական գաղափարներն ընդունել էր։ Այդ ուսումնարանում որ նշանակուած էր 17—18 տարեկան երիտասարդների համար, մայրենի լեզուն սովորցնում էին Հայր ժէրարի ձևով ու նրա անախիլ տետրակներով, միայն թէ՝ փոքր ինչ փոխուած, որովհետև նրանք աւելի մեծ աշակերտների համար էին նշանակուած։ Լեզուին վերաբերեալ դասատուութիւնն ընթանում էր մեծ յառաջադիմութեամբ։ Այդ տեղ դաս էին տալիս օգտաւէտ գիտութիւններ, զարգացնում էին աշակերտների բոլոր ընդունակութիւնները և ներշնչում էին երիտասարդներին բարոյական և կրօնական ուղղութիւն, որոնց յարակցեցին լաւիներէն, յունարէն, գերմաներէն, անգլիերէն, իտալերէն լեզուները, թուաբանութիւնը, բնագիտութիւնը, աշխարհագրութիւնը, պատմութիւնը, կրօնը և բարոյագիտութիւնը որքան կարելի էր։ Եթէ այդ բոլորի վրայ աւելացնենք հայրական կանոնաւոր խնամքը, դէպրտասանական կեանքը, մարզութիւնները ազատ օդում մարմինն ամրացնելու համար, կունենանք Նաւիլի ուսումնարանի բաւականին ճիշտ պատկերը։ Նաւիլը ոչ միայն կազմակերպեց այդպիսի մի օրինակելի ուսումնարան, այլ և ներկայացրեց զանազան գրուածքներ։

Ֆրէօբէլ։ Աուգուստ—Վիլհելմ—Ֆրիդրիխ Ֆրէօբէլը, մանկական պարտիզի ստեղծողը, ծնուեց 21 Ապրիլի 1782 թ։ Ծնողներին անհոգութեան պատճառով սկզբում նա ընկաւ վատ հասարակութեան մէջ։ Նրա երկու եղբայրները, որոնք նրանից՝ մեծ էին, սկսեցին հոգալ նրա մասին։ Յետոյ նրա քեռի Յոֆմանը, որ իմ քաղաքում պաստօր էր՝ պարտաւորուեց կրթել նրան։ Յոֆմանը մի ողորմած և մեղմ բնաւորութեան տէր մարդ էր։ Նա Ֆրէօբէլի հետ բարեսրտութեամբ էր վարուում և երեխան իրեն ամեն տեսակ բըռնութիւնից ազատ զգալով՝ որ առաջ դրծադրըում էին իր վրայ, սովորում էր քաղաքային ուսումնարանում թուաբանութիւն, աշխարհագրութիւն և փոքր ինչ էլ լաւիներէն լեզու։

Նա առանձին ձգտումն չունէր դէպի ուսումը, այլ պատճառով էլ նրան տալին մի անտառապետի մօտ անտառատածութիւն և երկրաչափութիւն սովորելու։ Ազատ միջոցին նա կարդում էր բուսաբանութեան և երկրաչափութեան վերաբերեալ գրքեր, բոյսեր էր ժողովում, զբօսնում էր անտառներում։ Նա շատ էր սիրում բնութիւնը, բայց և ասում էր, որ այն ժամանակ նա դեռ չէր հասկացել բուսականութեան ներքին կեանքը։ Երկու տարի անտառապետի մօտ մնալուց յետոյ, ցանկանալով ուսումը շարունակել, մտաւ Կնայլ համալսարանը, ուր մնաց նա մի տարի և կէս, լսեց մաթեմատիքայի, հանքաբանութեան, ֆիզիքայի, քիմեայի, վարչական իրաւաբանութեան, անտառատածութեան և ճարտարապետութեան դասախօսութիւնները։ Նրա նիւթական միջոցները շուտով սպառուեցին և չէր կարողանալով շարունակել իր ուսումը համալսարանում, վերադարձաւ Օրէրվէյսթալ, ուր նրա հայրը շուտով վախճանուեց։ Այդ ժամանակ նա դեռ չէր հետաքրքրուում մանկավարժութեամբ. նա մտածում էր վարչական կառավարութեան մէջ ծառայել։ Պարապմունք չը գտնելով նա՝ գնաց Ֆրանկֆուրտ և մտաւ մի ճարտարապետի մօտ։ Կարճ միջոցից յետոյ նրա բարեկամներից մէկը ծանօթացրեց նրան Գրիւնէր մանկավարժի հետ, որ կառավարում էր մի նորաձև ուսումնարան, ուր Պէստալոցցու եղանակով (մէտօդ) էին սովորցընում։ Գրիւնէրին մի ուսուցիչ էր հարկաւոր, նա այդ տեղն առաջարկեց Ֆրէօբէլին, որ փոքր ինչ տատանուելուց յետոյ՝ ընդունեց Գրիւնէրի այդ առաջարկութիւնը։ Այդ պատահեց 1805 թ. Ապրիլին։ Մի քանի օրից յետոյ նա իր եղբայր Քրիստոֆին գրեց հետևեալը. «պարտական է, թէ որքան իմ այժմեան գործն ինձ հաճելի է, հէնց առաջնի

դասի ժամանակ ինձ թուում էր, թէ միշտ այս գործով եմ զբաղուած եղել և կարծես թէ սորա համար եմ ստեղծուել, չգիտեմ թէ ինչպէս բացատրեմ այն բոլորը, որ կատարուում էր իմ մէջ։ Ձեմ կարող երևակայել, որ ես մտածած լինեմ մի ուրիշ գործով պարապելու, բայց պէտք է ասեմ որ չեմ մտածել, որ ես կարող եմ ուսուցիչ դառնալ։ Քանի որ դաս եմ տալիս՝ ես ինձ զգում եմ ինձ համար նախատեսմանուած վիճակի մէջ։

Երբ Գրիւնները Ֆրէօբէլին պատմեց Պէստալոցցու մասին, նրանում ծագեց մեծ ցանկութիւն տեսնել այդ մեծ մանկավարժին գործի մէջ, աշակերտներով շրջապատուած։ Հէնց որ ամառուան դասերը վերջացան՝ նա ոտով գնաց Իվերդօն։ Վերադառնալուց յետոյ նա աւելի աշխոյժով էր պարապում աշակերտների հետ և աշխատում էր գործադրել Պէստալոցցու մանկավարժական եղանակները։ Ցարուայ վերջին քննութեան ժամանակ նրա աշակերտներն այնպէս յաջող քննութիւն տուին, որ Գրիւնները շնորհաւորեց նրան։ Ֆրանկֆուրտ գալուց փոքր ինչ յետոյ նա յանձն առաւ դերմաներէն լեզուի և թուաբանութեան մասնաւոր դասեր տալ մեծատուն Հօլցհաուզէնի երեք որդուն։ Դուրս գալով Գրիւների ուսումնարանից՝ մնաց այդ պարոնի զերդաստանը որպէս անդային ուսուցիչ և շուտով Հօլցհաուզէնից համաձայնութիւն ստացաւ իր այդ երեք աշակերտների հետ Իվերդօն գնալու։ Այդ երիտասարդները պէտք է ուսանէին Պէստալոցցու մօտ։ Ֆրէօբէլը յաձախելով այդ նշանաւոր մանկավարժի ուսումնարանը՝ սովորեց նրանից այն՝ ինչ որ պակասում էր նրան։ Ֆրէօբէլն իր աշակերտների հետ 2 տարի մնաց Իվերդօնում։

Իր կենսագրութեան մէջ, որ նա գրեց 1827 թ. հաստատում է, թէ նա ներքին միութիւն չէր դտաւ Պէստալոցցու ուսումնարանում և և նրա աշխատակիցների մէջ, բայց և աւելացնում է, թէ այն ժամանակը, որ նա անցրեց Իվերդօնում՝ վճռական էր նրա կեանքի համար։

Նա նորից ցանկացաւ համալսարան մտնել։ Երբ Ֆրանկֆուրտ վերադարձաւ (1810 թ.), ցանկանում էր դուրս գալ Հօլցհաուզէնի տնից, որ դնաց Գէօտտինդէն, բայց սիրտը էլի մեկ տարի շարունակել իր ուսուցչութիւնը։ Մանկավարժութեան և կրթութեան վերաբերեալ այն թերի գիտութիւնը, որ ես ունեմ, ասում է Ֆրէօբէլը, այն ամենայն չնչին կէսն թուում էր ինձ, որ ես ինձ երջանիկ էի համարում, երբ կարողացայ թողնել իմ ուսուցչական պաշտօնը։

1811 թ. յուլիսի սկզբում Ֆրէօբէլը մտաւ Գէօտտինդէնի համալսարանը։

1811 թ. ամառը յայտնուեց այն գիտաւոր մեծ ասպարէզ, որ դրաւեց Ֆրէօբէլի ուշադրութիւնը և սիրեց նրան պարապել աստեղաբաշխութեամբ, որպիսի ուսումնասիրութիւնը յղացրեց նրա մէջ այն գաղափարը, որ նա անուանում է գիպական օրէնք (le loi sperigue) և որ նշանակում է կլորութեան, ամբողջութեան, կատարելութեան, միութեան, միաձևութեան օրէնք։ Այդ օրէնքը նա ընդունեց որպէս ընդհանուր ֆիզիքական և բարոյական օրէնք։ Այդ րոպէից սկսած հաստատուեց նրանում որ տիեզերքն ունի միութեան ընդհանուր (unité universelle) գործարանաւոր կապ, որ միացնում է բոլոր իրերը և ենթարկում է ամէն ինչ մի օրէնքի։ Նա համոզուեց, որ գունդն է (sphere) սկզբնական միութեան տիպարը, խորհրդաւոր նշանը (symbole), որով արտայայտուում է այդ աստուածային օրէնքը։ Նա ասում է, թէ սկզբում բոլոր երկնային մարմինները կազմել են մէկ տիեզերական գունդ, որ բաժանուել է զանազան մասերի և այդ մասերը կրկին զանազան մեծութեան գնդերի ձև են ստացել։ Այդ գնդերի ձևերից էլ հետևում է, որ գրանք միասին առաջ մի գունդ են կազմել։

Գունդն ընդհանուր ձևն է, տիեզերքի մասերի ձևն է. անհատական ձևն է, այսինքն տիեզերքի ընդհանուր անհատական ձևն է։ Ամէն մի գունդ ներկայացնում է կատարելութիւն, ամբողջութիւն, իսկ որպէս ընդհանուր-

թեան (տիեզերքի) մասն՝ կազմում է Երուսաթիւն, անկատարութիւն։ Որպէս զի մի մասին կազմակերպի իր զնդական ձևը, նա պէտք է ինքը ձգտի արտայայտելու իր գոյութիւնն իր մէջ և ինքը պէտք է ձգտի դէպի միութիւնը, անհատականութիւնը, այլակերպութիւնը (ձևափոխութիւնը)։

Ամէն մի էակ ինքն է ձգում այդ երեք առանձնայատկութեանցը, որոնցով նա ինքն իրեն որոշում է և դառնում ճշմարտին պիւրըննկալ։

Հէնց դրանցով է դունաը հասնում իր նպատակին, իր բարձր դիրքին (նշանակութեանը) որպէս ընդհանրութեան մի գործարանաւոր մասնիկ։

Պարզութեան հասարակ առաւելութիւնը հէնց նրանում պէտք է լինի, որ նա աշխատի մշակել, զարգացնել, ձևակերպել, կատարելագործել, ամբողջացնել ամենից առաջ իրեն յատուկ զնդական բնաւորութիւնը (իր առանձնական բնաւորութիւնը), իր զնդական (ընդհանուր) էութիւնը և յետոյ որպէս մարդկութեան մի մասնիկ՝ կատարելագործել իր առանձնայատկութիւնը, անհատականութիւնը, որ նա ինքն իրեն որոշի ձևակերպի իրեն յատուկ բնաւորութիւնը, իրենից ձեւացնի մի ամբողջութիւն, կատարելութիւն, աստեղաբաշխական լեզուով խօսելով՝ կարելի է ասել, ձևացնի իրենից կլորութիւն, ամբողջութիւն, կատարելութիւն, միութիւն։

Աշխատել զարգացնելու մի էակի զնդական բնաւորութիւնը՝ կը նշանակէ կրթել այդ էակին։

Զնդական օրէնքը ամբողջ իսկական կրթութեան հիմնական օրէնքն է։

Ֆրէօբէլի խորհրդաւոր դաղափարները զնդական օրէնքի վերաբերութեամբ՝ կազմում են նրա մանկավարժական ուսման հիմքը, որ ինքնուրոյն և անձնական է։

Բէրլինի հանքաբանական թանդարանում որպէս պրօֆէսորի օրնական ժամերով շաբունակ աշխատելով և բիւրեղների ձևերը ուսումնասիրելով, Ֆրէօբէլը մտածում էր բիւրեղների վրայ իշխած օրէնքների մասին։

Մենք տեսանք, թէ որքան նա անհեթեթ, անօգուտ կերպով որոշեց զնդի յատկութիւնները և ընդունեց երկրաչափական ձևերի նշանաբանական (simbolique) գաղափարները, և ինչպէս և միշտ աշխատում էր բոլորը վերածել վերագրել մի բարձրագոյն միութեան, որ պէտք է կազմեր սկզբնական ու վերջնական երկրորդական ձևերի։

Բէրլինում նա նորից, բայց հաստատապէս վճռեց նուիրել իրեն մանկավարժական դործին։ Այդ միջոցին, երեք 1816 թ. ամառը հրաւիրեցին նրան Ստօքհօլմ՝ որպէս հանքաբանութեան պրօֆէսօր։ բայց նա հրաժարուեց այդ պաշտօնից։

Ֆրէօբէլի եղբայր Քրիստօֆը, որ նրա երիտասարդ ժամանակ նրա պաշտպանն ու առաջնորդն էր, վախճանուել էր 1813 թ. թողնելով իր այրին և 3 որդի։ Ֆրէօբէլը վճռեց յանձն առնել այդ երեխաների կրթութիւնը և հիմնել Գրիդհնհէյմում մի ուսումնարան, որտեղ դրանք լինելու էին առաջին աշակերտները։ Միւս եղբօր երկու որդիքն էլ յանձնեցին նրան կրթելու և 13 նոյեմբ. 1816 թ. Ֆրէօբէլը բացեց իր ուսումնարանը՝ ընդհանուր զերմանական կրթութիւն տալու համար։ Նա հրաւիրեց Բէրլինից իր երկու բարեկամներին—Լանգէտալին և Միդդենդրօֆին որպէս օգնականներ, որոնք երբեմն նրա աշակերտներն էին եղած։ Կարճ միջոցից յետոյ այդ ուսումնարանը Գրիդհնհէյմից տեղափոխեցին Քիլհաու։ Այդ ժամանակ նրա աշակերտների թիւը 12 էր։

Կրօնական ուսմունքն առաջին տեղն էին բռնում այդ ուսումնարանի ծրագրում։ Ֆրէօբէլն ասում էր, որպէս զի կրթութիւնը պտղաբեր լինի, պէտք է յենուած լինի կրօնի վերայ, «Աստուած է սկիզբն ու դեկավարը բոլոր աիեղերքի։ Աստուած է ստեղծել ամեն ինչ՝ որ տեսնում ենք»։

(Շարունակելի)։

Բժ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ։

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔՂՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆՏԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ·

## ԿՈՆԴԱԿ

### Ա Ռ

### ԱԶԳԱՅԻՆՍ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ·

*Պարսկաստանի և Հնդկաստանայ Առաջնորդ Գերապատիւ Եսայի Արքեպիսկոպոսի Հնդկաստանում գտնուած հօտին այցելելու համար, ի մօտոյ Սպահանից դէպ ի Հնդկաստան մեկնելուն առթիւ, ազգիս վեհափառ Հայրապետը բարեհաճած է հետևեալ կոնդակն ուղղել, որը պէտք է կարդացուի եկեղեցիներում ի լուր Հնդկաստանի Հայ եղբարց։*

ՄԿՐՏԻՉ ԱՌԱՔԵԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՕՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԱՅՐԱՊԱՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

*Հայկազուն հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս և Մերոց բնակելոց ի Հնդկաստան և ի զանազան քաղաքս և ի կղզիս կողմանցն նուիրեմք զԱստուածային օրհնութիւն և զփրկչաւանդ ողջոյն։ Սրբանուէր քահանայից, սարկաւագաց և ամենայն եկեղեցական դասուց, բարեպաշտ երեսփոխանաց, բարեսէր Հոգաբարձուաց, հաւատարիմ ամիռականաց և գանձապետաց, բարեչան վաճառականաց, ճարտարագործ արհեստաւորաց, քրանաչան երկրագործաց, պարկեշտասուն տանտիկնայց, համեստաբայլ օրիորդաց, չերմեռանդ երիտասարդաց և առ հասարակ սիրելի ժողովրդոց մերոց արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հաւատացելոց ի Քրիստոս խնդալ ի Տէր։*

*Շնորհք, ողորմութիւն, գթութիւն Աստուծոյ Հօր, պահպանութիւն մարդասիրութիւն Որդւոյն Միածնի Յիսուսի Քրիստոսի, սէր միխիթարութիւն և խաղաղութիւն կենդանարար Սրբոյ Հոգւոյն, շնորհաբաշխ օրհնութեամբ և պարգևաձիր առատութեամբ Մօրս լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի վեհամպանծ Ս· Տաճարիս, աքանչելագործ Սրբոյ Գեղարդին և փայտին կենաց, ներկելոյ արեամբ փրկչին Յիսուսի և հրաշալի և նշխարաց Սրբազան Առաքելոցն Քրիստոսի նախկին Լուսաւորչայ Հայաստանեայցս աշխարհի Թադէոսի և Բարդուղիմէոսի և այլոյ երկրորդի Լուսաւորչի Հոգւոյ Մերոց Սրբոյն Գրիգորի Մեծի և ընաւից սրբութեանց գանձելոց աստանօր ի Մայր Աթոռս Արարատեան Հովանաւորին ի վերայ Հոգւոց և մարմնոց Ձերոց, և որովք ղօրացեալ և արիացեալ կացջիք անսասան ի փորձութեանց կենցաղոյս՝ յարատևեալք ի բարի վարս և ի յաջողութիւնս, ամէն։*

*Եւ ընդ աստուածապարգև օրհնութեան և փրկչաւանդ ողջունիս յայտ լիցի ձեզ, զի բարբոքի ի մեզ սէրն Հայրական և վառի տաքրմամբ սիրտ Մեր ի հոգս և ի խնամն զհոգևոր որդւոց Մերոց սիրելեաց՝ պանդխտելոցդ ի հեռաւոր երկիր օտար ի Հընդկաստան և ի կղզիս, ղորս յանձն արար վերին Տեսչութիւնն Հովուութեան Մերում և պաշտպանութեան, և չիցէ արգելք ի մեզ իւղ տեսանել և միխիթարել զորդեակս Մեր սիրելիս և միխիթարիլ ի ձէնջ ըստ հոգւոյ։*

*Սակայն ծանր ղբաղմունք և պարտիք Հայրապետական պաշտամանն պաշարեալ զմեօք՝ անհնարին առնեն զկատարումն ըղձից վաւագանաց։*

*Եւ ահա ոչ սակաւ միխիթարիմք, զի ըստ անձկանաց սրտի Մերոյ ուղեւորի Գերապատիւ Առաջնորդ վիճակիդ սրբազան Եսայի Արք-*

եպիսկոպոսն՝ ի դիմաց Մերոց յայցելութիւն և ի նուիրակութիւն կողմանցդ Հնդկաստանի, որ եկեալ հասեալ Տերամբ առ ձեզ միխիթարեսցէ զձեզ ընորհիւ Հոգւոյն Սրբոյ՝ քարոզելով զբանն կենաց, անուցանելով զբանաւոր հօտդ առ Ջուրս հանգստեան և ի վայրի դալարուոջ խաղաղութեան, յառաջադիմութեան և աղգաշինութեան, Աստուածային սիրոյ և ուղղափառ հաւատոյ Հայաստանեայցս առաքելական սուրբ եկեղեցւոյ, անօրինելով զպղծութս և զկարիս եկեղեցեաց և դպրոցաց ձերոց, ամենեցուն ըստ իւրաքանչիւրոյն հոգևոր կարօտութեանց մատուցանելով զլուսութիւն, և ի լրումն ամենայնի մատակարարելով զառաքեալ ի մէնջ զորբալոյս Միւռոնն յեկեղեցիս վիճակիդ։

Սիրելի որդիք Մեր ի Տէր, գիտէք զի պանծացեալ Հարքն Ձեր սրտաբեկ տոչորմամբ պանդխտեցան ի գրկաց սիրելի Հայրենեաց իւրեանց յայդ երկիր հեռաւոր, բայց սիրոք և իղձք նոցա, հոգւովք և մտօք յարաժամ ի Հայաստան և ի Ս. Էջմիածին էին, նոյն և յարժանաւոր շառաւիղազ նոցունց գոյ սիրտ հայրենասէր և աղգասէր, ջերմեռանդութիւն կրօնի Հայաստանեայցս առաքելական եկեղեցւոյ և վաստակ յառաջադիմութեան, պայծառութեան և կենդանութեան վտարանդի աղգիս, նախանձախնդիր հանդիսանալով միշտ հայրենի օրինաց, կանոնաց, աւանդութեանց, ծիսից և պաշտամանց ի մէջ օտարաց, ջերմ եռանդեամբ գուն գործէք անմոռաց պահել զմայրենի լեզու մեր, սրբութեամբ աւանդելով որդւոց և յաջորդաց Ձերոց, ընդ արտաքին գիտութեանցն, ի պատիւ Հայաստան աղգիս և եկեղեցւոյս առաջի այլոց ազգաց և սեռութեանց վայելով առաքինութեամբ, օրինակ բարեաց յաչս ամենեցուն։ Ուստի և Մեք զՀայրական պատրաստ հաւատացանելով յորդորեմք զսիրելի որդիսդ Մեր, բարենասխանձ եռանդեամբ Ձերով ի բաց թօթափեցէք զամենայն հնարս չարին և զամենայն կիրս վնասակարս, և ի բաց խորշեցարուք յօտարամուտ որոմանց բանսարկուին, սիրեցէք զմիմեանս և զօտարս իբրև զընկերս, զիաղաղութիւն կալջիք և զսէր առանց կեղծի առ միմեանս և առ ամենայն մարդիկ։ Պահպանեցէք զհատարակօգուտս և զաղգօգուտ հատատատութիւնս, խնամեցէք զաղքատս և զորբս և մի անտարբեր ակամբ հայեսջիք ի տուն բարոյական վերութեան աղգին, ի սիօն մեր—ի Մայր Աթոռս Ս. Էջմիածնի։

Ա.յլ և լիայոյս եմք, զի ըստ հայրենատուր բարեպաշտութեան Ձերում արժանաւոր հիւրասիրութեամբ ընկալջիք զՍրբազան Նահապետ Աբգեսիսկոպոսն, զԱռաջնորդն Ձեր՝ իբրև զփոխանորդ և զնուիրակ Մեր և իբրև զպաշտօնեայ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Արդ և Մեք օրհնեմք զՁեզ զամենեսին սրտեռանդն փափագանօք, և աղաչեմք զամենախնամն Աստուած, զի հովանաւորեալ բնակեսցի ի սիրտս և ի հոգիս ձեր, պարգևեսցէ ձեզ զյաջողութիւնս յամենայն գործս Ձեր բարիս, պահեսցէ զձեզ ազատ յամենայն չար պատահարաց և շնորհեսցէ սիրտ սուրբ և հոգի ուղիղ զբարին, զհաճոյն և զօգտակարն խորհել և գործել, և լուսաւորեսցէ զհոգիս ննջեցելոց Ձերոց և արժանի արասցէ երկնից արքայութեանն։

Ողջ լերուք և օրհնեալք յԵրկնաւոր Հօրէ մերմէ և ի մէնջ, Ամէն։

յամի Տեառն 1894
Յունիս 26
Ընդ ստամարիս մերում
Ո.ՅԽԳ Հրատիչ ի
Համար 1136

(յիսակականին ստորագրեալ է)
ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Հայրապետական Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ։

## ԱՋԳԱՅԻՆ

Ամսոյս 11-ին Յարութեան տօնին առաւօտեան ժամը 8-ին Գ. Հոդ. Ճեմարանի երաժշտական խումբը սարկաւագները համախմբելով Ս. Ցաճարի զանգակատան մօտ հանդուցեալ Գէորգ Գ. Կաթողիկոսի դերեզմանի շուրջը, հոգեհանդիսատ կատարեցին միաբանութեան մի քանի եպիսկոպոսների և վարդապետների, այլ և Հոդ. Ճեմարանի ուսուցիչների ու սանների

հետ: Հոգեհանգստից յետոյ շնորհ. կարապետ սարկաւագ Տէր Մկրտչեանց արտասանեց մի համառօտ ճառ, որով յիշեց ելախտագիտական զգացմունքները թէ իւր և թէ իւր ընկերների կողմից առ Գէորգ Դ. ի յիշատակն իւրեանց մօտալուտ ձեռնադրութեան առթիւ: Սարկաւագները՝ որքան էլ տխուր լինէին՝ որ Հոգ. ձեմարանի սաների այդ նախընծայ ձեռնադրութիւնը կատարուելու էր Գէորգ Դ.-ի մարմնաւոր աչքից անտես, սակայն և այնպէս ուրախ էին, որ իրագործուում էր հանդուցեալ Հայրապետի բաղձանքը Նորին Վեհափառութեան Հայոց Հայրիկի գահակալութեան օրով:

Ապա Ս. Գայիանեան վանքում հանդիսաւոր պատարագ մատոյց Բարձր. Սրբազան Մեսրովպ Արքեպիսկոպոս Սմբատեանց, որ Նորին Վեհափառութիւնից յանձնարարուել էր ձեռնադրելու: Պատարագին ներկայ էին շատ մխիթարեաններ, Հոգ. ձեմարանի ուսուցիչներն ու աշակերտները, նաև բաւական մեծաթիւ ժողովուրդ: Այդ հանդէսը պատուեց իւր ներկայութեամբ Նորին Վեհափառութիւնը, մնալով վանքում մինչև հանդէսի վերջը: Նորին Վեհափառութեան հայրական օրհնութեան արժանացել էին սարկաւագները արդէն նախընթաց երեկոյեան, ստանալով և հարկաւոր խրատներ իւրեանց ապագայ կեանքի և դործունէութեան համար:

Ձեռնադրուող սարկաւագներն էին եօթ հոգի, որոնցից միայն վեցն էին Հոգ. ձեմարանի շրջանաւարտ սաներից: Նորին Վեհափառութիւնը բարեհաճել էր ուշադրութիւն դարձնել նոյն իսկ նոցա անունների վրայ, ըստ որում ձեռնադրելով՝ ստացան նոքա հետևեալ անունները.

Շնորհ. կարապետ սարկաւագը մնաց նոյն անունով.

« Ստեփան սարկաւագը—Բենիկ սրեղայ
« Սողոմոն սարկաւագը—Կոմիտաս »
« Յուսիկ սարկաւագը—Յուսիկ »
« Ղևոնդ սարկաւագը—Նշնիկ »
« Տիգրան սարկաւագը—Տիրայր »

Դոցա հետ ձեռնադրուեց և վահան սարկաւագ Դատեանց. որ եկել էր Ղարաբաղից, բերելով իւր հետ շատ հնութիւններ և դրչագրերներ. որ ստացաւ Իսայիկ անունը:

Ձեռնադրութեան հանդէսը շատ շքեղ անցաւ, որից յետոյ արժ. հայրերը եկան և դիմելով դէպի հանդուցեալ Պալասանեանի դերեզմանը, կատարեցին մի լռիկ հոգեհանդիստ:

Միւս օրը այցելեց նոցա Բարձր. Սրբազան Մեսրովպ Արքեպիսկոպոսն և խօսելով մի քանի հայրական խրատներ, յայտնեց որ երեկոյեան կատանան նորընծաները կուսակրօնութեան վեղարը:

Այս վերջին հանդիսին ևս բարեհաճեց ներկայ լինել Նորին Վեհափառութիւնը:

Անդուհետև նորընծաներն իրաւունք ստացան վերադառնալու իւրեանց խուցերին, որտեղ պէտք է պահեն սահմանուած քառասունքը:

Շատ ուրախալի է, որ 20 երկար տարիներից յետոյ վերջապէս Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը տալիս է իւր երախայրիք կրօնաւորները շրջանաւարտ սաներից, որոնցից մէկն արժ. կարապետ արեղայ ստացել է աստուածաբանական համալսարանական կրթութիւն:

Կուրախանայ հանդուցեալ մեծ Հիմնադրի հոգին, ուրախ է և դպրոցականամ Հայրապետական, ինչպէս բարեհաճեց արտայայտել իւր բանախօսութեան մէջ: Այսպիսով ձգտում է Պօղոս առաքեալի խօսքն և այսուհետ. « Ես տնկեցի, Ապողոս ջուր եաւ, այլ Աստուած աճեցոյց »: « Որ տնկացն և որ ղջուրն եաւ՝ մի են, բայց իւրաքանչիւր ոք զիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց »:

Արժանապատիւ նորընծաները բարեշնորհ. Նահապետ վարդապետի տեսչութեան և Սրբազան Օրմանեանի ուսուցչութեան օրով ընծայուածներն են: Տայ Աստուած, որ արժ. հայրերն իրագործեն Նորին Վեհափառութեան յոյսերն, այլ ևամբողջ ազգի եկեղեցասիրական ակնկալութիւնները: Տայ Աստուած, որ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանն այսուհետև գոնէ պատրաստէ ճշմարիտ եկեղեցական-

ներ իւրեանց վայել կրթութեամբ և ուղղութեամբ։ Բայց և տայ Աստուած արժ. նորընծաներին բարեպաշտօն գործունէութեան միտաւառ եռանդ և անարգել յաջողութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ծաւալի հօտին մէջ։

—

Կաթողիկոս ազգաւագի ծառը.

Շիրիմ, որ մեր բարերար Հօր Նշխարներն ես ամփոփում. ահիւ և դողութեամբ ենք մօտենում քեզ այս վճռական խորհրդաւոր պահուն կրկնելու և երբեկնելու մեր ուխտը՝ ուխտ սրբազան հաւատարմութեան և անքակտելի հաստատութեան, դու մեզ վստահութիւն ներշնչիր մեծ մեծ պարտքերի մի այսպիսի ծանր լուծ քաղցր հեշտութեամբ մեր վերայ առնելու։ Անձկալից սրտով քեզ ենք կանչում, Վեհին Գէորգայ պանծալի անուն, որ ոսկեղէն տառերով մեր կրթութեան դրօշակի վերայ մակագրած՝ տարիներէ ի վեր մեզ ոգևորել, ուղղութեան ճանապարհով մինչև այս կէտն ես առաջնորդել դու և այժմ կինք եղեր մեր ուխտի համար։ արթուն յուշարար մնալով կեանքի ամեն քայլափոխումն թէ որպ ոգւոյ ենք մենք զաւակ. այդ անուամբ զուարթանանք տագնապի րոպէում. այդ անունից երկնչենք, երբ փորձանաց դեը գայթակղութեան կամ թուլութեան որոգայթ մեր առաջը լարէ, և ո՞վ է այն չուառականը, որ սրբութեան քօղը կրել համարձակելով այդ անուան արատ բերելուց պիտի չփախչէ։

Այժմ Հայր, որ անշուշտ դիտումես երջանիկների կայանքից մեր այս գումարումը թող խաղաղեն բազմաչխատ գործերդ, փափաղներդ լիցուած են. հեռատես խորհուրդներդ կատարումն ընդունած. Քո մեծ գործին արդիւնք, բազմապատիկ խնամոցդ տրիտուր, ահա Տիրոջ սեղանի առաջ ենք գնում մեր սրտերը, մեր Հոգին, մեր ամբողջ կարողութիւնը, Նորան լինի ամենը, Նորա տան սպասաւորութեան սուրբ գործին նուիրած։ Տկար են արդարև ու տարուբեր մեր սրտերն ու Հոգին, յոդոցդ մեր մտքերը, անհաստատ մեր կամքը. ըստ ամենայնի դուշնաքեայ է և անարժան թերևս մեր այս նուէրս, սակայն ամենայն յոժարութեամբ բերած. օրհնիր մեր ուխտը և բարեհաճ եղիր Նորա առաջ, որ ոչինչը լինչ դարձնել կարող է, տկարը զօրացնել, անարժանը նուիրագործել և արժանի կացուցանել. Նա տայ մեզ կարողութիւն սրբութեամբ սկսելու և կատարելու։

Հայաստանեայց Սրբազնագոյն Հովուապետի, մեր մեծագոյն հայրապետաց արժանընտիր յաջորդի ձեռըն ենք յանձնում մեր այս սրբազան ուխտի կնիքը, կրկնելով իւր առաջ ուխտ մտադիւր հնազանդութեան. Նա, որ տէր է ցպով և գաւազանաւ առաջնորդելու մեր սպասաւորութեան գործին, այլ որի աջու աչք գորովագութ հայր են խոստանում ամենքին։ Անկեալ է նա և անհաղորդ մեր սրբազան ուխտին, որ այդ հայրական գթոյն վեհութիւնը գնահատել չի իմանայ և կմոռանայ երբէք կամակոր հպատակութեամբ պատրաստ գտնուել մեր Հոգևոր Տիրոջ մէն մի հրամանին։ Հայոց Հայրիկը, որ ասես մեր երջանիկ նախնեաց շարքից է իջել, հայ կրօնաւորի տիպարը կենդանի օրինակաւ մեր առաջը նկարելու. որի սիրտը միշտ վառ է եղել հայ անուան սիրոյ կրակով, որի բերանում միշտ կենդանի է եղել սուրբ աւետարանի ճշմարտութեան խօսքը՝ նա թո՛ղ ներշնչէ մեզ այն հոգին, որ մարդկանց հոգիները սիրով կապել, ճշմարտութեամբ ղեկավարել գիտէ։ Անտէր ազգի հոգսերու ու վշտերի ծանրութեան ներքոյ ձերմկացած ալիք մեր երիտասարդական անձնապաստանութիւնը մինչև գետին է խոնարհում Ձեր պատկառելի վսեմութեան առաջ, Ձեզ ենք կամենում հետևել հեզ և խոնարհ սրտով, ամբասիր ու բարերեր մի կենաց առաջնորդ մեզ եղէք։

Օրհնեցէք մեզ և դուք, Սրբազան Հայրե՛ր, Ս. Էջմիածնի հնօրեայ միաբանութիւն, ներկայացուցիչ փառաւոր անցեալի և պահապան աւանդական սրբութեանց, որ այսօր կրկին նուիրագործութեամբ ի շարս ձեր դնել յօժարումէք մեր տհաս ոգիքը. ձեր առաջ ենք երդկնում մեր ուխտը. յարգել անցեալը, ճշմարտութեամբ պահել նուիրական աւանդութիւնները, խոնարհել այն ամեն սրբութեան առաջ, որ մեր պաշտելի նախնեաց անուան ու գործի դրոշմն է կրում. օրհնեցէ՛ք և աղօթեցէ՛ք, որ այդ հայրերի շաւղովն ընթանալ նոր ուժով, հին բայց և միշտ նոր կենդանի, հարազատ և կենդանարար ոգին արծարծել կարող լինենք։

Հապա դո՛ւ, Հայոց ժողովուրդ, որ այդպէս հետաքրքիր աչքերով դիտումես մեզ և պիտ շարունակես դիտել ու քննել մեր իւրաքանչիւր քայլափոխը. որ անտուն անտէր գաղթականից սկսած մինչև ճոխ պալատների մէջ զուարճացող մեծատունը թշուառութեանց ու մոլորութիւնների մի ծով ես ներկայացնում, բռնումես անհամար վերքեր, որոնց սպեղանին, վշտեր, որոնց սփոփում պէտք է և մատով ցոյց ես տալիս. ահա մեր հովիւներն ու վարդապետները. ա՜հ, ես ճանաչում եմ այդ հայուածքը, գարձո՛ւր, տանել չեմ կարող, Նա հալում մաշում է իմ երիտասարդ հասակը։ Տե՛ս ժողո-

վուրդ, Հայի արիւն արցունքը Թող լինի մեր ուխտի չորրորդ կնիքը. քո Տառաչանքը երբէք դադար չտայ մեզ Թմրութեան անկողնի վերայ, ընդոստ վեր ելնենք, Կայենի նման աստանդական շրջենք, եթէ քո ցաւերը տեսնենք ու անտարբեր մնանք. ուղեկցիր և դու մեզ քո մաղթանքներով, լուսաւորչի Աստուածը չի նիրհում, Նա քո աղաչանքն էլ կլսէ,

Եւ վերջապէս Դուք, Ներկայացուցիչներ մեր ուսուցիչների և դաստիարակների, որ մեր մանուկ սրտերն ու մտքերը ղեկավարել էք, բարւոյ և ուղղութեան շաւղի վրայ դրել. վերջինը ձեզ ենք յիշում, բայց ոչ ի յետինս, և դուք եղէք մեր ուխտին վկայ և աղօթեցէք, որ ձեր ցանած բարի սերմերը զարգանան և պտղաբերեն,

Իսկ դուք Գէորգեան ճեմարանի սիրասուն սաներ, մեր սննդակից եղբայրներ, որ նոյն դաստիարակութեան շաւղով ընթանում էք մեր ետևից, նոյն Մասեաց հովն է և ձեր կուրծքերին զօրութիւն տալիս նոյն սուրբ տեղիք են իրենց հովանին ձեր վերայ սփռում, այս աւերակների ոգին ձեզ այժմ տակաւին օրօր է ասում. անո՜ւշ այդ կազդուրիչ քունը բարեյաջող Թ՛ող լինի արթնութեան բոպէն. յո՜ւշ ձեզ այն ժամանակ այս պահուն խորհուրդը, Թ՛ող չնորհաց Ս. Հոգին առաջնորդէ ձեր քայլերը և տայ իւրաքանչիւրին, ինչ որ արժան է և Իւր բարի կամաց տրամադրութիւնը. սակայն երբ ժամը հնչէ ու այս ուխտի կնիքը նաև ձեր առաջ բացուի. Ս. Եկեղեցու սպասաւորութեան գործին նուիրելու հրաւիրէ. քայլեցէք անվախ, վստահութեամբ դրէք ձեր ձեռքը մաճի վերայ և ետ մի նայէք, արտի Տէրը կհոգայ թէ ձեր և թէ իւր ցանքի մասին. խուլ մի մնաք միայն այս ժողովրդի հառաչի հառմար, այս սրբազան տեղացց խորհրդաւոր լեզուն հասկանալ սովորեցէք, Այո՛, այդ լեզուն խօսէ Թ՛ող այս ժամուն և մեր սրտերում. մեր շնորհատու մայր Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ դերագոյ Աթոռ և լուսոյ խորան, Թ՛ող և մեր շուրջ շողայ այն լոյսը, որով յղփացած մեր երանելի Նահնիկ նահատակութեան ասպարէզ ելաւ, այդ լոյսը նուիրագործէ մեզ սրբութեամբ մօտենալու աշխարհ խորհրդոյն, քո սպասաւորութեան, քո վերաչինութեան գործի հաւատարիմ ծառայութեան արժանի շնորհքն ընդունելու. Երկնաւոր Ճարտարապետ այս հրաշագան տաճարի, Յիսո՛ւս, Անմահ խաչեցեալ .... «Ո՞ տացէ ի Սիոնէ ազիրկութիւն Իսրայէլի, ի դարձուցանել Տէառն զդերութիւն ժողովրդեան իւրոյ»։

«Ձմի խնդրեցի ի Տէառնէ և զայն աղաչեմ, զբնակել ինձ ի տան Տէառն զամենայն աւուրս կենաց իմոց»։

Հետևեալ կիւրակէ առիս 18-ին նոյն Ս. Գայիանեան վանքում հրամանաւ և ի ներկայութեան վեհափառ Հայրապետի, Սրբազան Գառնակերեանը սարկաւագ ձեռնադրեց դպիր Յովսէփ Տէրունեանին ի միաբանութիւն Մայր Աթոռոյս. Շնորհուհնակ սարկաւագն իւր ուսումն աւարտել է Գուրգինեան վարժարանում 1883-ին. և ի Տէր հանդուցեալ Նալպէկ Յովհն Սրբազանի մօտ աշակերտելով՝ դպրութեան 4 աստիճան ընդունած է, այնուհետև ուսուցչութիւն է արել Յումինիայում Պարսկաստանում և Յոդոստոյում: իսկ այժմ Նորին վեհափառութեան Դիւանի քարտուղար է:

—

Առիս 25-ը Ս. Գէորգայ տօնը շատ հանդիսաւոր էր Ս. Էջմիածնում: Ճաշուայ ժամից յետոյ Հոգեհանգիստ կատարուեց հանգուցեալ Գէորգ Դ. Կաթուղիկոսի գերեզմանի վրայ՝ ներկայութեամբ միաբանների և Հոգ. Ճեմարանի սանների և ուսուցիչների, այլ և խուռն ժողովրդի: Հոգեհանգստից յետոյ հանդէսը փոխադրուեց Հոգ. Ճեմարանի բակն, որտեղ պէտք է կատարուէր նորա տարեդարձը: Ճեմարանի հիւսիսային կողմում պատրաստուած էր հանդիսի տեղը. այնտեղ դրուած էր Հայրապետական բարձրադահ աթոռ, մի կողմը ամբիոն և երկու կողմերն աթոռներ:

Հանդէսը բացուեցաւ Քարէր. Սրբազան Մեսրովպ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ, որոյ շուրջ բազմեցան միաբանք, ուսուցիչք և պատուաւոր հանդիսականները, սաներն ու ժողովուրդը շրջապատեցին դռնայ, Քարէրը. Սրբազանը օրհնեց հանդէսն և խոկոյն երգեցիկ խումբը երգեց «Ո՜հ ինչ չքնաղ» երգը: Երգից յետոյ Ճեմարանի տեսուչ պ. Կ. Կոստանեանցը բարձրացաւ ամբիոն, սիրալիր ողջունեց հանդիսականներին և մի հակիրճ և ազդու բանախօսութեամբ դարձրեց ունկնդիրների միաքն ու հայեացքը դէպի Ճեմարանի ամբողջ կեանքն, ընթացքն և նպատակը: Նա սկսեց այն տեղից՝ թէ ի՞նչ-

պիսի նեղ հանգամանքներում գոյաւ երջանկայիշատակ Գէորգ Դ-ը Ս. Էջմիածնի գանձատանն և թէ ի՜նչպէս մեծամեծ զօհողութիւններով կանգնեց դիւանաթեան տաճարն այն ժամանակ, երբ այդ տեսակ մէկ մեծ հաստատութիւն պահելը մի անկարելի բան էին համարում ուսումնականների չքաւորութեան կամ պակասութեան պատճառով։ Ժամանակն անցաւ և այժմ այդ հոյակապ շինութիւնը փոքր է ներկայ պահանջների նկատմամբ, օրէցօր աւելի և աւելի շատ աշակերտներ են ընդունւում և նորին վեհափառութիւնը մտադիր է լինում՝ շինութեան ծաւալն ընդլայնելու համար։ Յիշեց հանգուցեալ հիմնադրի սահմանած նպատակն, որ գեմարանը իբրև ամենայն Հայոց գեմարան՝ պէտք է տղին տայ վարդապետներ, քահանաներ և Հայոց Եկեղեցու ոգով կրթուած ուսուցիչներ։

Ահա քանի տարի է, որ գեմարանը մարդիկ է տուել տղին, վերջերումս էլ բախտ ունեցանք տեսնելու առաջին նորընծաները Ս. Էջմիածնում և «ես հաւատացած եմ որ գեմարանը կմնայ յաւիտեան և կտայ իւր պըտուղները, քանի կայ տղն ու Ս. Էջմիածինը, որոնք յաւիտեան կմնան» շեշտեց պ. տեսուչը. ապա նկատեց, որ ժողովուրդը պարտաւոր է պահպանել Ս. Էջմիածնի այդ ճրագը, մի և նոյն ժամանակ պէտք է ամենայն հետաքրքրութեամբ՝ հետևէ նորա ընթացքին և տեսնէ ո՞րքան է կարողանում տեսուչն առաջնորդել իւրեան յանձնուած գործն և հիմնադրի ս. նպատակին հասցնել և իրագործել Նորին վեհափառութեան ս. ակնկալութիւնները ի սրիտս իւր անբնդհատ և սրտագին խնամածութեան։

Տեսչի բանախօսութիւնից և բարեմաղթութիւններից յետոյ կրկին երգեցին և ապա Նորին Բարձր Ըրբազնութիւնը մի քանի խօսքերով հաստատեց նորա ասածները, աւելացրեց մի քանի գեղեցիկ քաջալերականներ և խմասասիից արտայայտութիւններով օրհնեց թէ այդ անդաստանն և թէ նորա մէջ սրտանուէր գործողներին։

Հանդէսը վերջացաւ մի քանի երգերից յետոյ։

Երեկոյեան $6\frac{1}{2}$ ժամին սկսուեց մի գեղեցիկ լուսավառութիւն։ դպրոցի լապտերները ու մոմերը, կանթեղները ու ճրագները, դրօշակները ու դրասանդները զարդարում էին գեմարանի ամբողջ հիւսիսային կողմը։ Ճակատին, մուտքի կամարի տակ գեղեցկագէս փայլում էր երջանկայիշատակ հիմնադրի պատկերը՝ գործ գեմարանի նկարչութեան ուսուցիչ պ. Եղիշէ Թադէոսեանցի։ Պատկերի սահուկ պայծառ կարդացուում էին հետևեալ վերտառութիւնները.

«Հաւատաք, յոյս, սէր։»

«Ջայս պատուիրեմ ղի սիրեջիք զմիմեանս»։ «Գնեցէք ժամանակն»։ «Հոգով եռացէք, Տեառն ծառայեցէք»։ «Այս է յաղթութիւնն, որ յաղթէ աշխարհի՝ հաւատքն մեր»։

Գեմարանի հարաւային բակում սանները մտադիր լապտերով ցոյց էին տալիս զանազան պատկերներ և ցոյց ժողովուած բազմութիւն ժողովրդի։ Առհասարակ ժողովրդի բազմութեան թիւ չկար։ Երգեցիկ խումբը երգում էր զանազան երգեր։ Իսկ կարից արձակում էին տեսակ տեսակ փամփուշտներ ի զուարճութիւն ականատեսների. այլ և բակում իրար հետևում էին տեսակ տեսակ հրաճաշոյթներ։

Ամենուհետև կատարուեց գեմարանի դահլիճում տեսչի և ուսուցիչների և այլ պաշտօնեաների մասնակցութեամբ մի ընտանեկան համեստ հանդէս։ Մինչդեռ ամենքն էլ վայելում էին թէյ և մրգեղէն, ամրիոնից կարդում էին ճառեր, ոտանաւորներ և ծիծաղաշարժ առակներ, իսկ ամեն մի միջոցին երգում էին մի քանի ձեռներէցների նուագածութեան ընկերութեամբ։ Ուսուցիչներից խօսեց պ. Մ. Բերբերեանը՝ բարձրացնելով ուսման յարգն, և պ. Կ. Յովհաննիսեանը կարդաց մի գեղեցիկ ոտանաւոր։ Պ. Մ. Բերբերեանը կարդաց և գեմարանի նախկին սանների ուղարկած շնորհաւորութեան հեռագրները, որոնք սակայն շատ քիչ էին՝ համեմատելով մինչև այժմ ա-

*ւարտաճնների թուի հետ։ կարճ և աղդու կր Թաւրիզից ուղարկածը՝ «երկար օրեր Մայր Ձեմարանին» բովանդակութեամբ։*

*Տեսուչը խօսեց մի քանի անդամ առաջարկելով նախ Նորին Վեհափառութեան կենացին, որ որոշընդոստ կեցցէներով ուղեկցուեց, և ապա Ս. Էջմիածնի և միաբանութեան, Ճեմարանի յարատեւութեան և ուսուցիչներինը, որոնք կեցցէներով ընդունուեցան։ Վերջին բանախօսութեան մէջ մի «առաջին խրատ» ասաց, այն՝ որ Քրիստոս հրամայել է՝ «Ձայս պատուիրեմ դի սիրեսջիք զմիմեանս»։ Ի վերջոյ խօսեց և նորընծայ կարապետ արեղան, առաջարկելով տեսչի կենացը։ Հանդէսը վերջացաւ ժամի 12-ին։*

—

*Միւս օրը՝ Վարագայ Ս. Խաչի ծօնին, որ Նորին Վեհափառութեան օծման օրուայ պատկերն է, եպիսկոպոսական ձեռնադրութիւն կար։ արդէն շաբաթ օր առաւօտեան երդուեալներ էին բարեշնորհ կիւրեղ վ. Սրապեանին, Մակար ծ. վ. Բարխուդարեանին, Անանիա վ. Համազասպեանցին և Խորէն ծ. վ. Սահակեանին, ժամասացութեան սկսուելուն պէս Մայր Տաճարը լցուեց խուռն բազմութեամբ, այնպէս որ անհնար էր այլ և մանել ներս։ ժողովուրդը ամեն կերպ աշխատում էր տեսնել Հայոց Եկեղեցու մեծ հանդիսաներից այդ մէկը։ Ձեռնադրութեան վկաներ էին Գեր. Յովհաննէս և Գեր. Դաւթեան եպիսկոպոսները, որոնք բազմել էին սեղանի վրայ աջ ու ձախ։ Խորատավիլակը Գեր. Գառնակերեանն էր, իսկ սարկաւագութիւն էին անում բարեշնորհ Ղևոնդ և Գէորգ վարդապետները։ Երբ խորանից եղնելով՝ եպիսկոպոսացուները չոքէչոք դիմեցին դէպի սեղանը և բարձրացան 7 աստիճաններով, ներկայ եղողը մի տպաւորութիւն էր ստանում թէ որքան դժուար է այդ աստիճանները ծնկաչոք բարձրանալ, այնքան ծանր է և եպիսկոպոսական լուծը Քրիստոսի ճշմարիտ առաքեալի համար, և այդ երբէք չի կարող մոռանալ ոչ մի եպիսկոպոս։*

*Հայոստանեայց Ս. Եկեղեցու կարգով նախ քան ձեռնադրութիւնը պէտք լինի մէկ ձեռնադրուողի երդումն և մէկ ժողովրդի վկայութիւնը։ Երդման մէջ արդէն խոստացել էին« անխոտոր և անսայթաք ընթանալ ի վարդապետութեան հաւատոյ և պատուիրանաց Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ» թէ ըստ տեսականին և թէ ըստ ծիսից, լինել գործունեայ քարոզիչ այդ ամենի անխախտ պահպանութեան, ցմահ հաւատարմութեամբ և կատարեալ հնազանդութեամբ ծառայել Ս. Էջմիածնին «ի նեղքոյ իշխանութեան և հրամանաց» Ս. Լուսաւորչեան ներկայ և ապագայ Գահակալաց, «ոչ բնաւ անցանել անդ քան զահմանն իշխանութեանն զոր տացէ Աստուած ի ձեռնադրութենէ յեպիսկոպոսութիւն»», և «ոչ ձեռնադրել աշառութեամբ կամ կաշառօք ի քահանայութիւն կամ ի սարկաւագութիւն» և այլն։*

*Ապա վինչդեռ ձեռնադրուողները Ս. Յովհաննու սեղանումն էին, Գեր. խորատավիլակն հրաւիրմամբ մի առ մի վկայում էին համօրէն եպիսկոպոսներին, սարկաւագներին, դպիրներին, Ջահընկալներին, երդմնեցուցիչներին, ընթերցողներին, դռնապաններին, սաղմոսասացներին, այլ և իշխանների և աղքատների կողմից ձեռնադրուողների արժանիքը։ Յետոյ ձեռնադրուողները հետզ հետէ խոստացան կատարել Նորին Սրբութեան խրատներն և պատուէրները՝ շարունակ պատասխանելով ըստ որում և իրաւունք էին ստանում մի մի աստիճան բարձրանալ դէպի Ս. Սեփհաննոսի սեղանն, որտեղ բազմած էր Նորին Վեհափառութիւնն արժանավայել շքով։ Այդ բոլոր պատուէրներն, որոնց համաձայն պարտաւոր են կենցաղավարել և դործել ձեռնադրուողները, վերաբերում են վարք ու բարքի, բնաւորութեան, առաքելական գործունէութեան, ձեռնադրական իրաւանց, կատարման Ս. Հարց հրամանաց, բարեդործութեան, հնազանդութեան, հաւատքի բոլոր մասերին, և այլ պարտաւորութեանց։ Գեղեցիկ է մանաւանդ հետևեալ հարց ու պատասխանը. «Եղբայր, ճշմարտո՞ւթեամբ եկիր յայս վաստակս»։—«Ցէր՝ չեմ բաւական այսմ շնորհի, սակայն եղբարքն լմ ընտրեցին զիս։»*

Երբ սուրբ եմիփորոնը՝ որ նշան է «աւետարանական լծի», հանդիսը փոքր ինչ յետոյ հետևեց Նորին Վեհափառութեան, որ բուռն վառ ապով դիմաւորեր դեպի աւագ սեղանը։ Այնտեղ շարունակեց պատարագն և կարդայ ձեռնադրուողների վրայ այն հրաշալի աղօթքները, որով խնդրուեր է նոցա համար եպիսկոպոսական բոլոր շնորհները։ Վերջապես մի քանի երդերից և ընթերցուածներից ետքն Նորին Վեհափառութիւնը օծեց նոցա ձեռնան և բոլոր մատները, տուաւ հովուական գաւազանն և մատանին և Աւետարան, որով և վերջացաւ իսկական ձեռնադրութիւնը «Ընդ Ոյնի» ժամանակ։ * Ժողովուրդը սկսաւ ցրուել միայն այն ժամանակ, երբ Նորին Վեհափառութիւնը վերջացնելով պատարագն, գնաց Վեհարան հանգստանալու։ Շատին մեծ բազմութիւն կար սեղանատան, խօսեցան և կեցան այնտեղ առաջարկեցին ու բարեմաղթութիւններ արին Բարձր. Սրբազան Պետրոս Աղքեպիսկոպոսն ու Սրբազան Գառնակերեանը։

—

Միւս օրը ամենս 26-ին պէտք է լինէր Նորին Վեհափառութեան Ս. օծման տարեդարձի ծոնը։ Առաւօտեան ժամից յետոյ հանդիսապէս կատարուեց Ս. Տաճարում միաբանական մաղթանք վասն կենաց Նորին Օծութեան, որից յետոյ միաբանութիւնը դիմեց Վեհարան ի շնորհաւորութիւն։ Երբ ներկայացան, Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց խօսել հետևեալը.

«Բարի եկիք։ Ելեկուան պարտքը այսօր կկատարէք. պարտքեր վաղ թէ անադան պէտք է կատարուին՝ թէև աշխարհիս վրայ մի և նոյն ժամանակ չեն կատարուիր։ Ամենքս ալ ունինք պարտքեր, երանի թէ կարենայինք կատարել իւր ժամանակին, բայց առիթներ, հանգամանքներ կներկայանան և մենք չենք կարենար կատարել։

Շնորհաւորելու եկեր էք. ես կմտածեմ որ կշնորհաւորէք և հարց ալ կընէք, խօսքով էք ըսեր, բայց ես կը հասկընամ «Հայրիկ, տարին բոլորեց, ի՞նչ ըրիք»։ Շատ կրնար վըստահաբար ըսել թէ շատ բան ըրի. ատոր ալ մեծ պատճառ կար. եկաւ գաղթականաց խնդիրը, որ անդադար հոգ պատճառեց ինձի. դեռ տակաւին կը խորհինք 5000 գաղթականներու համար և ինչ որ կարևոր գտեցինք, ըրինք։ ..... Ասոնք մի հայրապետի համար մեծ մտածողութեան առարկայ է։ Երբ միայնակ կը խորհիմ, շատ դիտեր՝ ի՞նչ պիտի լինի այսօր վաղնան. կը խորհեմ և բաւ է, ցերր, կըսեմ բաւ է։ Ցերը պիտի օգնէ, հարկաւ. բայց ամենքս ալ պիտի մտածենք ազգի համար, զոհ չենք այս վիճակին ամենքս ալ։

Ահա կը նայինք մեր շուրջ, Ս. Էջմիածնի շինութիւնները աւերակ ճնացեր են. այդ աւերակները կշինենք, ի՞նչ ընենք, դանձարանէն կծախսենք, կշինենք և հետզհետէ ամեն բան կգայ կուղղուի. Աստուած պահէ ժողովուրդը. այս հեշտ է։ Կը մնայ մի բան, որ այնչափ հեշտ չէ. վանքի աւերակները կըշինուին, մեր սրտերու աւերակներն են որ կմնան. այդ ալ պէտք է շինուի։ Ամենայն միաբան պէտք է աշխատի իւր սրտի աւերակները շինելու, ինքն պէտք է աշխատի։ Սրտեր ամեն ժամանակ կրնան աւերակ դառնալ. առիթներ շատ են. առիթներ կը դան դրսէն, առիթներ կը դան ներսէն և կը քանդեն մեր սրտեր. բայց եթէ ունենանք Աւետարան մեր ձեռքը, այն միայն կը շինէ մեր սրտերու աւերակները։

Ամենայն մարդ իւր ընկերին կըսէ քաղցր խօսք մը, կուզէ, բայց չի կարենար շինել ուրիշ սրտի աւերակը. այդ միայն Աւետարանը կը շինէ։ Եթէ դուք չաշխատիք ձեր սրտերու աւերակները շինել, ես միայն ի՞նչ ընեմ։ Շատ անգամ ըսեր եմ որ դուք իմ գործակիցներս էք, իմ թիկնապահներս էք. դուք ալ պէտք է գործէք ինձի հետ։ Քրիստոս ըսաւ իւր առաքեալներուն՝ «առանց իմ ոչինչ կարէք առնել»։ Ես ալ ձեզի կըսեմ, որ ինձի հետ գործէք։ Կը տեսնաք, առաջ այստեղէն Ամերիկայ չէինք կրնար շուտով բան մը գրել. այժմ այդպէս չէ. հեռագիր կայ, քանի մը

* «Ընարատի ընթերցողք կկարդան ձեռնադրութեանց էութիւնը հետևեալ համարներում։

ժամուան մէջ կխօսինք այնտեղին հետ· մենք ալ չենք կրնար բան մը ընել, որ ազդ չիմանայ և չտեսնայ· ժողովուրդ է, կասէ կխօսի, կը գրէ: Մենք ալ դիտենք ազգի վիճակ, այնպէս դործենք, որ մենք ալ գոհ լինինք, ազգն ալ: Աշխարհի մարդիկ են, առիթ կլինի խօսելու, բայց մենք աշխատինք որ առիթ չտանք: Ասոր համար պէտք է լսենք Քրիստոսի պատուէրը՝ «Ջայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս»· ասոր պարտ է հետեւել և աշխատել շինելու մեր սրտի աւերակները: Հարկաւ, ժամանակ պէտք է, աստուածային արարչադործութիւն չունինք, որ իսկոյն ընենք· դործենք միշտ, ես ալ կաշխատիմ այս վանքի համար, որքան կրնամ: Այս վանք ազգի աչքն է, ազգի սիրտն է· մեր նախնիք շատ են աշխատեր ասոր պահպանութեան համար և մեզի ա-ւանդեր են, մենք ալ պէտք է աշխատինք ա-նոր համար և թողունք մեր յաջորդներուն:

Կաղօթեմ որ Աստուած տայ միաբանու-թեան ուղիղ սիրտ, մենք ալ պարտական չը-մնանք ազգի առաջ: Օրհնեալ լինիք»:

—

Միաբանութիւնից յետոյ ներկայացան Հոդ· Ձեմարանի ուսուցիչներն ու սանները: Եկեղե-ցու զանգը տուին այդ միջոցին, այնպէս որ Նորին Վեհափառութիւնը ժամանակ չունե-ցաւ երկար խօսելու· դառնալով դէպի ուսու-ցիչները՝ խօսեց վերջին սրտերի աւերակաց մասին և յորդորեց աշխատել շինելու այդ ա-ւերակները Ս· Աւետարանով: Նկատեց որ Իւր ասելիքը յարմար առիթ կասէ, իսկ ուսուց-չաց հետ առանձին պէտք է խօսի: Ապա շա-րունակեց·

«Դուք պէտք է աշակերտներուն ալ կրթէք, մարդ կծնի իբր մի գունդ միս· եթէ այնպէս թողունք առանց լոյսի, առանց կրթութեան, ոչինչ չի լինիր· երբ կը կրթենք, լոյսի մէջ կը ղարգացնենք՝ մարդ կդառնայ: Այժմ այ-սոնք ալ կրթութեան կարօտ են, որ մարդ լի-նին և օդուտ բերեն ազգին և Եկեղեցուն: Ահագին ծանր կլինի Ձեմարանի վրայ, որ կծանրանայ Ս· Էջմիածնի վրայ, կերթաք սե-զանատուն և կուտէք, կկարծէք թէ ամեն բան պատրաստի կելլէ· բայց գիտէք թէ ինչ-պէս կհաւաքուի ժողովրդէն· գիւղէ գիւղ կը շրջին ժողովրդի մէջ, իւղ, պանիր դդալ դդալ կժողովեն ձեզ կերակրելու համար· դուք պէտք է գիտնաք այլ և փոքր ինչ ալ սակաւապե-տութեան սովորիք, շատ պահանջող չլինիք: Միայն պէտք է շատ աշխատիք ուսումի կըր-թութիւն ստանալ, Ազգի և Եկեղեցու հաւա-տարիմ սպասաւոր լինիք: Ձեմարան ամեն բան չի կրնար տալ· այն ճանապարհը կը ցուցնէ, որ դուք յետոյ աշխատիք և զարգանաք: Ու-սուցիչներդ ալ պէտք է աշխատիք կարճ ճամբայ բռնել, երկար պատմներ չանել: Պ· Տէր Մի-քայէլեան մանկավարժութենէ պիտի կբռնէ: Կգրէք երկար երկար յօդուածներ բան մը չենք հասկընար: Ամեն օր նոր նոր ոճեր կը հնարեն յԵրուսղէմ, բնաւ չեն կրնար համա-ձայնիլ: Դուք ալ ձեր գործ կերկարէք· դուք ալ ձեր փոլիթիքն ունիք:

Պէտք է կարճ ընել, ճանապարհը ցուցնել, միացեալը ինքեանք կաշխատին:—Օրհնեալ լի-նիք»:

Դոցանից յետոյ ներկայացան քահանաներ, ուսուցիչներ, պաշտօնեաներ և ուխտաւորներ, որոնց ևս Նորին Վեհափառութիւնը մխիթա-րեց կարճ բանախօսութիւններով և ամենքին օրհնեց:

—

Նոյն օրը պատարագիչն էր Գեր· Կիւրեղ Սրբազանն, որ և միաբանութեան մի ճաշ տը-ուաւ: Ուրախալի անցաւ և այս, Սրբազանի կենացն առաջարկեց Գեր· Գառնակերեանն և յայտնեց միաբանութեան կողմից բարեմաղ-թութիւնները յաջող դործունէութեան: Նոր-ընծայ Սրբազանն ևս մի հակիրճ և դեղեցիկ բանախօսութիւնամբ ակնարկ ձգեց առաջնորդա-կան ծանր դործերի վրայ և յոյս յայտնեց, որ Նորին Վեհափառութեան բարեմաղթու-թեամբ ու միաբանութեան բարեխօսութեամբ անշուշտ կյաղթէ դժուարութիւնները: Իւր կողմից առաջարկեց Նորին Վեհափառութեան և յետոյ միաբանութեան կենացը:

Այսպէս՝ այս ծոնական օրերը մեծ ուրա-խութեամբ անցան Ս· Էջմիածնում և ամեն մի հանդիսում միաբանութիւնն ուրախու-թեամբ օրհնում էր և Հայ ազգն ու ժողովուր-դըն և նորա կենացը բարեմաղթութիւնները անում:

---

Տեղի սղութեան պատճառով Նորին Վեհափա-ռութեան Կոնդակաց և Ս. Սինոդի Օրագրութիւն-ների քաղուածքները մնում են հետեւեալ համարին:

## Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ·

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԵՆ

I

# Տ· Տ· ՄԿՐՏԻՉ Ա· ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ ԵՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ·

II

## ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՃԱՌՔ,

ՅԱՃԱԽԱԳԱՏՈՒՄՔ ԼՈՒՍԱՒՈՐՔ·

III

ՍՈԿՐԱՏ

## ՀՈՅՍԵՆ ՏԵՍԵԼ

# ՓԱԹԱԿԱԶՄ ՕՐԱՑՈՑ

## 1895 ԹՈՒԻ

ԳԻՆՆ Է ԱՄԵՆԱՑՆ ՏԵՂ, 20 ԿՈՊԻԿ

Դիմել Ս· Էջմիածնի Տպարանը·

Ա· ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ·

## ՊՍԱԿԻ

**ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

(Արտատպած 1894 թ· «Արարատ»ից)

**1894.**

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԻԿ

(Սակաւ-ոքի-)

Դիմել Հեղինակին ի Ս· Էջմիածին·

## ՉԵՌԱՑ ՄԱՇՏՈՑ

Երէց-ը պօ-ֆը-ն-ն·

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼԻ

*Կարելի է դիմել և Տպարանին այս հասցէով·*

Типографія Эчміадзинскаго Монаст.

Ա· ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆ

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

**ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

(Արտատպած «Արարատ»ից)

Ս· ԷՋՄԻԱԾԻՆ

1893

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԻԿ

Ա· ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ·

## ԳՈՀԱՐՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ·

(Արտատպած 1893 թ· «Արարատ»ից)

1894.

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ·

(Սակաւ-ոքի-)

Դիմել Ս· Էջմիածնի Տպարանը·

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ

ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

# ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ

ԳԻՐՔԸ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Յանկայողները բարեհաճեն դիմել Մայր Աթոռոյ Տպարանական վարչութեան։

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՆՈՐԻՆ Վ.Ե.Ա. ՄԻՒՍ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՆԸ ԵՒ

Ա

## ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԴԱՍԵՐ

ԳՐԵԱՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ի ՊԵՏՍ

*Հոգեւոր կրթութեան եկեղեցւոյ որդւոց եւ զարմոցի մանկանց.*

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

ԳԻՆՆ Է 30 կոպէկ.

Բ

## ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹ

***ԽՈՀ ԱՄԱԾ***

ԵՒ

ԿՈՐՈՒՍԵԼՈՑ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԳՐԵԱ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ի ՆՈՒԷՐ

ՀԱՑԱՍՏԱՆԵՑԱՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ ՈՒԽՏԻՆ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գինն է 30 կոպէկ

**Կան եւ միասին կազմած. գինն է 60 կոպէկ.**

Դիմել Տպարանական վարչութիւն է Ս. Էջմիածին.

*Գումարով առնողներին զիջումն կ՚ելնի։*